**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԿՖԿՏՀ)» ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3**

ք. Երևան «19» 09 2024թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:[1]

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.[2]

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Տեղեկատվության պահպանում

---

Կատարողն իրավունք ունի պատճենահանել Պատվիրատուի փաստաթղթերը, եթե դա անհրաժեշտ է Ծառայությունները մատուցելու համար, և պահել պատճենները, որոնք հիմնավոր կերպով անհրաժեշտ են իրականացված աշխատանքը հավաստելու և/կամ կատարած եզրակացությունները հիմնավորելու համար, կամ եթե դա պահանջվում է կիրառելի մասնագիտական ստանդարտներով և ուղեցույցներով:

- Տեղեկատվության փոխանցում

Կատարողն իրավունք ունի տրամադրել տեղեկատվություն իր ապահովագրողներին, իրավախորհրդատուներին և այլ խորհրդատուներին և ներկայացուցիչներին, պայմանով, նրանք պարտավոր են կիրառել գաղտնիության պահպանման նույն միջոցները, ինչ Պատվիրատուն, եթե վերջինիս ներկայացուցչի դեմ հարուցվի դատական հայց կամ առաջանա նման հայցի սպառնալիք Ծառայությունների մատուցման հետ կապված, ինչպես նաև ընկերության կողմից իրավական պաշտպանության միջոցների ընթացիկ և/կամ հնարավոր օգտագործման նպատակով:

Կատարողն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում տրամադրել աշխատանքային փաստաթղթեր կամ տրամադրել կամ փոխանցել այլ տեղեկատվություն Կատարողի ներկայացուցիչներին՝ այն չափով, որքանով դա անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման և/կամ Կատարողի ներկայացուցիչների միջև վիճակագրական տվյալների փոխանակումը հեշտացնելու, որակի ստուգման կամ համապատասխանության ապահովման ընթացակարգերի իրականացման, ֆինանսական հաշվետվողականության պահանջների հետ համապատասխանության ապահովման, հաճախորդի և պայմանագրի ընդունման ընթացակարգերի համակարգման կամ անկախության և շահերի բախման ստուգման իրականացման համար, պայմանով, որ այդ տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու համար կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցները:

Սույն կետի նպատակներով՝ *«Կատարողի ներկայացուցիչներ»* նշանակում է Կատարողը, «KPMG International Limited»-ի ցանկացած այլ անդամ ընկերություն և բոլոր անձինք, որոնք վերահսկվում են այդ անդամ ընկերության կողմից, ներառյալ այդ անդամ ընկերության և վերջինիս կողմից վերահսկվող անձանց բոլոր գործընկերները, տնօրենները, աշխատակիցները և գործակալները, և «Կատարողի ներկայացուցիչ» կնշանակի նրանցից որևէ մեկը:

- Գաղտնիություն

Պատվիրատուին ներկայացվող Ծառայությունների ցանկացած արդյունք Կատարողի կողմից կտրամադրվի պայմանով, որ այն նախատեսված է միայն Պատվիրատուի սեփական շահերի և տեղեկատվական պահանջների համար և ամբողջությամբ կամ մասամբ չի պատճենահանվի, դրան հղումներ չեն կատարվի և այն չի հրապարակվի (բացառությամբ այն դեպքերի, երբ դա Պատվիրատուի կողմից կատարվում է ներքին օգտագործման կամ Պատվիրատուի գործընկերների

կամ կոնտրագենտների հետ Ծառայությունների արդյունքների հետ կապված աշխատանքների, քննարկումների նպատակով կամ հրապարակումը բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից կամ պայմանավորված է դրանցից բխող անհրաժեշտությամբ) առանց Կատարողի նախապես տրամադրված գրավոր համաձայնության, որը կարող է տրվել որոշակի պայմաններով:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 2):

Կատարողը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո պետք է ներկայացնի եռամսյակային հաշվետվություն: Հաշվետվությունները հայերենից բացի, պետք է ներկայացնեն նաև անգլերեն լեզվով: Անգլերեն լեզվով ներկայացված փաստաթղթերի (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը: Վճարումները կկատարվեն ըստ համաձայնեցված ուղենիշների կամ աշխատանքների ավարտի հիման վրա, ինչպես նկարագրված է ստորև՝

- Տեխնիկական բնութագրի նկարագրություն.

**1-4-րդ առաջադրանքները:** Դրանք մեկանգամյա առաջադրանքներ են, որոնք կապված են կոնկրետ գործընթացների և առաքման հետ:

○ **Առաջադրանք 5 (Նախագծի կառավարում)**՝ սա կրկնվող առաջադրանք է, որի տևողությունը կարող է տատանվել 24-36 ամիս՝ կախված նախագծի ժամանակացույցից:

- **Վճարման կառուցվածքը.**

○ **Առաջադրանք 1-ից 4-ը:** Վճարումները կկատարվեն յուրաքանչյուր համապատասխան առաջադրանքի հաջող կատարման և հավանության դեպքում:

▪ **Առաջադրանք 1.** Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 45 օր:

▪ **Առաջադրանք 2.** Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 2.5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 25 օր:

▪ **Առաջադրանք 3.** Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 7.5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 70 օր:

▪ **Առաջադրանք 4.** Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 30 օր:

○ **Առաջադրանք 5 (Նախագծի կառավարում)**՝ Առաջադրանք 5-ի ընդհանուր գումարը կկազմի պայմանագրի ընդհանուր արժեքի 60%: Այս առաջադրանքի տևողությունը գնահատվում է 24-36 ամիս: Վճարումները կատարվելու են եռամսյակային կարգով՝ ՖՆ կողմից եռամսյակային հաշվետվությունների ընդունման պայմանով:

▪ Եռամսյակային հաշվետվությունների տրամադրման և հաստատման գործընթաց.

Եռամսյակային հաշվետվությունը պետք է ներառի Նախագծի կարգավիճակը և մանրամասն տեղեկատվությունը հաշվետու ժամանակահատվածում կատարված և ընթացքում գտնվող գործողությունների վերաբերյալ:

- ՖՆ ստացված հաշվետվությունները կվերանայի ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պարզվի, որ որևէ տարր/դրույթ թերի կամ անընդունելի է, ապա գրավոր պատասխան կտրվի Խորհրդատուին/Ընկերությանը: Այնուհետև վերջինիս կտրամադրվի 10 աշխատանքային օր՝ հաշվետվությունը համապատասխան վերանայելու համար: Վերջնական հաստատման գործընթացը սահմանվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

- Հաշվի առնելով, որ Նախագծի ճշգրիտ տևողությունը որոշվելու է վերջնական մատակարարի ընտրությունից հետո (մեկ այլ գնման գործընթացի արդյունքում, տրամադրվում են հետևյալ նախնական հաշվարկները.
- Եթե նախագծի տևողությունը 24 ամիս է, ապա վճարումները կբաժանվեն 8 եռամսյակի:
- Եթե նախագծի տևողությունը 36 ամիս է, ապա վճարումները կբաժանվեն 12 եռամսյակի:

Եթե իրական նախագծի տևողությունը նախատեսվածից կարճ լինի, ապա մնացած ցանկացած գումար կվճարվի հետագա փուլի ընթացքում:

- Վերջնական վճար: Պայմանագրի արժեքի մնացած 20%–ը կվճարվի ամբողջ նախագծի հաջող ավարտից հետո՝ պատվիրատուի կողմից վերջնական ընդունման դեպքում:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 597,326,400 (հինգ հարյուր իննսունյոթ միլիոն երեք հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ընդ որում Առաջադրանքի 1-ի համար Կատարողի կողմից առաջարկված գինը կազմում է 60,336,000 ՀՀ դրամ, Առաջադրանքի 2-ի համար՝ 30,168,000 ՀՀ դրամ, Առաջադրանքի 3-ի համար՝ 60,336,000 ՀՀ դրամ, Առաջադրանքի 4-ի համար ՝ 90,504,000 ՀՀ դրամ, Առաջադրանք 5-ի համար՝ 355,982,400 ՀՀ դրամ, որի տևողությունը 24 ամիս է:

Ս

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման առաջադրանքների արժեքները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը: Եթե ԿՖԿՏՀ-ի ներդրման պայմանագրով սահմանված ժամկետները լինեն ավելի երկար, քան սույն պայմանագրով նախատեսված Առաջադրանքի 5-ի ժամկետներն են, ապա պայմանագրի գինը կողմերի փոխադարձ համաձայնությամբ ենթակա է վերահաշվարկման՝ (առաջադրանքի գին)/ (ըստ առաջադրանքի ամիսների առավելագույն քանակ) * (ավելացված ամիսների քանակ):

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված կնքվելիք համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրությունը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի

չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք)

ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի

անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել

նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1 հավելվածները, ինչպես նաև Կատարողի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

________________ Ա. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի
Պլազա բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02529689
Հ/Հ 1510000944344363
Արարատբանկ ԲԲԸ
Տնօրեն՝

________________ Ի. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*

*« 19 » 09 2024 թ. կնքված*
*ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը |
| 1 | 72261150/501 | Տեխնիկական բնութագիրը ստորև ներկայցվում է* | դրամ | 597,326,400 | 1 |

| Ծառայության Իրականացումը ըստ առաջադրանքների | Մասնակցի կողմից առաջարկված գինը ըստ առաջադրանքների | Վճարումները ըստ % | Վճարման ենթակա գումար |
|---|---|---|---|
| Առաջադրանք 1 | 60,336,000 | 5.0% | 29,866,320.0 |
| Առաջադրանք 2 | 30,168,000 | 2.5% | 14,933,160.0 |
| Առաջադրանք 3 | 60,336,000 | 7.5% | 44,799,480.0 |
| Առաջադրանք 4 | 90,504,000 | 5.0% | 29,866,320.0 |
| Առաջադրանք 5 | 355,982,400 | 60.0% | 358,395,840.0 |
| Վերջնական վճար | | 20.0% | 119,465,280.0 |
| Ընդամենը՝ | 597,326,400 | | 597,326,400 |

## * ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Բովանդակություն**

1.1 Նախաբան ........................................ 3

1.2 Տեխնիկական բնութագրի նպատակը ........................................ 4

1.3 Աշխատանքի շրջանակ ---------------------------------------- 5

1.4 Ծրագրի տևողությունը ........................................ 7

2. Տեղական գրասենյակ ........................................ 8

3. Շահերի բախում ........................................ 8

1.Ներածություն

**1.1 Նախաբան**

ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարության շրջանակներում նախատեսվում է ներդնել կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ (ԿՖԿՏՀ/GFMIS):

Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է ԿՖԿՏՀ ծրագրի ներդրման գործընթացում՝ խորհրդատվական ընկերությունների «Մեծ քառյակից» ձեռքբերել ծրագրի կառավարման խորհրդատվական ծառայություններ:

ԿՖԿՏՀ ծրագրի շրջանակներում պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ ՖՆ) ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեում), առաջնորդվելով ՀՀ գնումների օրեսնդրությամբ հայտարարելու է երկփուլ մրցույթ՝ ԿՖԿՏՀ ծրագրային ապահովման ձեռքբերման նպատակով:

ԿՖԿՏՀ ներդրման հիմքերն ամրագրված են Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ (Գլուխ 19), որը հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1716-Լ որոշմամբ:

Ծրագրի շրջանակներում ՖՆ պաշտոնական կայքէջում 2023թ. հուլիսից գործում է «Թվային Օրակարգ» բաժինը: ԿՖԿՏՀ ծրագրին առնչվող մեծածավալ տեղեկատվություն, ինչպես նաև հետաքրքրվող կողմերի հետ հաղորդակցման գործիքներ են տեղադրվել այդ բաժնում:

Սույն ծրագրի շրջանակներում ս.թ. հուլիսի 2-ին մեկնարկել է շուկայի ուսումնասիրության ընթացակարգը, որը ներառել է մատակարարների նախաորակավորման չափանիշները:

Փաստաթղթերի հղումները ներառում են շուկայի հրավերի և նախաորակավորման համար անհրաժեշտ ընթացակարգը:

ԿՖԿՏՀ ներդրման ծրագրի հիմնական արդյունքները կենտրոնանում են հետևյալի ուղղությունների վրա՝

- Ռազմավարական և գործառնական մակարդակներում արդյունավետ որոշումների կայացման խթանում,
- Թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, ներառյալ հանրային ծառայությունների մատուցում,
- Պատշաճ վերահսկողության ապահովում,

- Հաշվետվությունների և հաշվետվողականության որակի բարելավում, ներառյալ հաշվեգրման մեթոդի ամբողջական անցում,
- Պետական հատվածում ֆինանսների կառավարման հստակ և հաշվետու գործընթացի իրականացում,
- Բյուջետավորման, ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գործընթացների առավել արդյունավետ կառավարում,
- Կայուն տնտեսական զարգացում. արդյունավետ ֆինանսական կառավարման միջոցով ՀՀ ընդհանուր կայուն տնտեսական զարգացման խթանում:

**Առկա փաստաթղթեր**

Պատվիրատուն 2021թ. մրցութային կարգով ընտրված խորհրդատվական ընկերության աջակցությամբ իրականացրել է գործող ՊՖԿ համակարգերի և գործընթացների ուսումնասիրություն, վերլուծություն, ինչպես նաև հաստատվել է առաջարկված ԿՖԿՏՀ նոր կոնցեպտը, դրա ֆունկցիոնալ «ճարտապետությունը» և ստեղծվելիք տեղեկատվական համակարգի ընդհանրական տեխնիկական պահանջները: Այդ փաստաթղթերը հանդիսանալու են գնման գործընթացի հիմք:

**1.2. Տեխնիկական բնութագրի հիմնական նպատակը.** ԿՖԿՏՀ նախագծի/ծրագրի շրջանակներում բացառությամբ էլեկտրոնային գնումների մոդուլի, պատվիրատուին խորհրդատվական «Մեծ քառյակի» ընկերություններից ընտրված ընկերության կողմից հետևյալ ծառայությունների մատուցումը.

- Պատվիրատուի կողմից տրամադրված Նախաորակավորման պայմանների (RFI) և Տեխնիկական առաջադրանքի (RFP)՝ ներառյալ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջների ուսումնասիրություն, բարելավման առաջարկների ներկայացում
- Մրցութային փաստաթղթերի պատրաստման և վերանայման **և ստուգմանն** ուղղված աշխատանքների աջակցություն.
- Աջակցություն նախաորակավորման փուլում մատակարարների ընտրության հարցում
- Մրցույթի հերթական փուլերում աջակցություն մատակարար(ներ)ի վերջնական ընտրության գործընթացում
- Խորհրդատու ընկերության մասնակցությամբ ողջ աշխարհում իրականացված համանման նախագծերի հիման վրա լավագույն փորձի ներկայացում

- Ծրագրերի կառավարման ծառայությունների և առանցքային փորձագետների տրամադրում՝ ԿՖԿՏՀ ծրագրի իրագործումն ապահովելու նպատակով: Վերջինս ներառում է, սակայն չի սահմանափակվում ծրագրի կառավարման/կազմակերպման սահմանմամբ և իրականացմամբ՝ հստակ RACI մատրիցով, որոշումների ընդունման կետերով և այլ կրիտիկական տարրերով:
- Հիմնվելով նմանատիպ ծրագրերի (հաջողությամբ իրականացված) լավագույն փորձի վրա՝ խորհրդատվական ծառայությունների տրամադրում հետևյալ ուղղություններով.
  - ԿՖԿՏՀ ճարտապետություն, ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջներ,
  - ԿՖԿՏՀ Տեխնիկական և անվտանգային պահանջներ:

**1.3 Աշխատանքի շրջանակը**

Խորհրդատվական ծառայությունները ներառելու են ԿՖԿՏՀ-ի հաջող նախագծման, մշակման և ներդրման գործում ՖՆ-ին աջակցության միջոցառումների լայն շրջանակ: Աշխատանքի իրականացման շրջանակը ներառում է հետևյալ հիմնական առաջադրանքները.

**1.3.1 Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրություն,**

- **Պատվիրտուի կողմից տրամադրված նախաորակավորման պայմանների (RFI) և Տեխնիկական առաջադրանքի (RFP)՝ ներառյալ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջների վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրություն.** վերոնշյալ փաստաթղթերի մանրակրկիտ վերլուծություն՝ ծրագրի նպատակներին և ոլորտի լավագույն փորձի վերջիններս համապատասխանության հավաստման համար:

**1.3.2 Բարելավման առաջարկների մշակում.**

- **Թերացումների և բացերի վերհանում.** Առկա փաստաթղթերի վերլուծության հիման վրա պետք է բացահայտվեն ցանկացած անհամապատասխանություններ, բացթողումներ և թերացումներ, որոնք պահանջում են հետագա պարզաբանում կամ կատարելագործում:
- **Բարելավման առաջարկներ.** Պատրաստել մանրամասն առաջարկներ նախաորակավորման և մրցույթի անցկացման պայմանների և Տեխնիկական առաջադրանքի (RFI, RFP) փաստաթղթերի և պահանջների բարելավման վերաբերյալ՝ համոզվելով, որ վերջիններս արտացոլում են նմանատիպ նախագծերից քաղված լավագույն փորձը և դասերը:

**1.3.3 Աջակցություն մրցութային փաստաթղթերի պատրաստման գործընթացում**

- Մրցութային փաստաթղթերի կազմում. աջակցել ՖՆ-ին համապարփակ և հստակ մրցութային փաստաթղթերի մշակման գործում՝ ապահովելով դրա համապատասխանությունը ծրագրի նպատակներին՝ հավանական հայտատուներին հստակ ցուցումների տրամադրում:
- **Համապատասխանության և ամբողջականության ապահովում.** Համոզվել, որ մրցութային փաստաթղթերը համապատասխանում են սահմանված կանոններին և ստանդարտներին, ինչպես նաև ամբողջական են տեխնիկական, ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջների առումով:

**1.3.4 Աջակցություն մատակարարի ընտրության հարցում մրցույթի նախաորակավորման փուլում(RFI). եթե այդ պահի դրությամբ խորհրդատուն արդեն ընտրվել է՝ նախաորակավորվածների գնահատում.** Աջակցել մատակարարների կողմից տրված նախաորակավորման հայտերի գնահատմանը՝ հիմնվելով նախապես սահմանված չափանիշների վրա, որպեսզի երաշխավորվի միայն որակավորված մասնակիցների անցումը հաջորդ փուլ:

- **Գնահատման չափանիշների մշակում.** Մշակել մատակարարի կարողությունների գնահատման հստակ չափանիշներ, ներառյալ տեխնիկական փորձաքննություն, ֆինանսական կայունությունը և նմանատիպ նախագծերում անցյալ փորձառությունը:

**1.3.5 Աջակցություն մատակարարի ընտրության հարցում մրցույթի հետագա փուլում (RFP)**

- **Մատակարարի վերջնական գնահատում.** Աջակցել մրցույթի հետագա փուլերի նախաորակավորված մատակարարների կողմից ներկայացված առաջարկների մանրամասն գնահատման գործընթացին՝ որպեսզի ապահովվի գնահատման մանրակրկիտ և անաչառ գործընթաց:
- **Մատակարարի ընտրության մատրիցա.** Տրամադրել համապարփակ գնահատման մատրիցա, որը դյուրացնում է լավագույն մատակարարների համեմատությունն ու ընտրությունը՝ հիմնվելով տեխնիկական, ֆինանսական և որակական չափորոշիչների վրա:
- **Մատակարարի առաջարկությունների ստուգում.** Մասնակցել մատակարարների կողմից տրամադրված հայտերի (refence sites) ստուգման գործընթացին՝ համոզվելու համար, որ նախորդ նախագծերի հաջողության վերաբերյալ նրանց պնդումները ճշգրիտ են:

**1.3.6 Համանման նախագծերի վրա հիմնված լավագույն փորձի տրամադրում.**

- **Համեմատական և լավագույն փորձի վերլուծություն.** Տրամադրել տեղեկատվություն և առաջարկություններ՝ հիմնված ԿՖԿՏՀ նմանատիպ նախագծերի լավագույն փորձի վրա, որոնք իրականացվել են ողջ աշխարհում:

- **Գիտելիքների փոխանցում.** Նախկինում հաջող իրականացված ծրագրերի գիտելիքների և փորձի փոխանացում ԿՖԿՏՀ նախագծի շրջանակներում ցանկալի արդյունքներ ապահովելու համար:

**1.3.7 Հանդիպումներ և Խորհրդատվություններ**

- **Հայտատուների հետ հանդիպումների մասնակցություն.** հնարավոր հայտատուների հետ հանդիպումների և խորհրդակցությունների մասնակցություն՝ փորձագիտական խորհրդատվություն տրամադրելու և ցանկացած տեխնիկական կամ ընթացակարգային հարցերի լուծման համար:
- **Շարունակական աջակցության և խորհրդատվության տրամադրում.** Տրամադրել շարունակական խորհրդատվություն և աջակցություն մրցութային գործընթացի ողջ ընթացքում ՖՆ կողմից յուրաքանչյուր փուլում հստակ և ճշգրիտ որոշումներ կայացնելու համար:

**1.3.8 Նախագծի կառավարման ծառայություններ. Նախագծի պլանավորում, և իրականացում.** Համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ և հիմնվելով լավագույն փորձի վրա (PMI, Prince 2) պատրաստել ծրագրի կառավարման ձեռնարկը՝ ծրագրի կառավարման մեթոդաբանության հիմնական տարրերը՝ ծրագրի պլանավորում, ռիսկերի կառավարում, ռեսուրսների կառավարում, որակի կառավարում, ինչպես նաև հաղորդակցության կառավարում:

Հաշվի առնելով ԿՖԿՏՀ ծրագրի բարդությունը, որը ներառում է պետական մարմիններում բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցություն, կարևոր է, որ խորհրդատուն/ընկերությունը տրամադրի մանրամասն սահմանումներ և իրականացման հստակ պլանավորում: Սա պետք է ներառի RACI մատրիցան և պարզորոշ սահմանված որոշումների կայացման կետերը՝ ծրագրի ողջ ընթացքում հստակություն և հաշվետվողականություն ապահովելու համար:

- **Շարունակական խորհրդատվություն և աջակցություն.** Ծրագրի իրականացման ողջ ընթացքում տրամադրել շարունակական խորհրդատվություն և աջակցություն, ՖՆ կողմից յուրաքանչյուր փուլում հստակ որոշումներ կայացնելու համար:

**1.4 Ծրագրի տևողությունը**

Ծրագրի տևողությունը նախնական գնահատմամբ 36-51 ամիս:

Փուլերն ու ակնկալիքները ներկայացված են ստորև.

**1.4.1** Մատակարարի (ների) ընտրություն. հնարավոր տևողությունը՝ 6-9 ամիս:

**1.4.1.1 Նախաորակավորում (RFI).** Պոտենցիալ մասնակիցների նախաորակավորում՝ հիմնվելով ԿՖԿՏՀ մշակման և իրականացման գործում ունեցած փորձի և հնարավորությունների վրա:

**1.4.1.2 Տեխնիկական առաջարկ (RFP).** Մատակարար(ներ)ի ընտրությունը պետք է հիմնված լինի նրանց համապարփակ տեխնիկական և ֆինանսական առաջարկների վրա: Այս փուլն ավարտվում է պայմանագրի կնքմամբ, ծրագրի պլանավորմամբ և վերջինիս իրականացման մեկնարկով:

**1.4.2 Մշակման և իրականացման փուլ (հնարավոր տևողությունը՝ 24-36 ամիս)**

Այս փուլը ներառում է ԿՖԿՏՀ-ի ծրագրային ապահովման լիարժեք մշակում և իրականացում՝ ներառյալ տվյալների միգրացիան և փոխանցում ՖՆ-ին: ԿՖԿՏՀ-ն բաղկացած է մի քանի մոդուլներից, որոնցից մի քանիսը կարող է իրականացվել առանձին փուլերում՝ համաձայն Պատվիրատուի վերջնական որոշման:

**1.4.3 Համակարգի հանձնման եզրափակիչ փուլ (հնարավոր տևողությունը՝ 6 ամիս)**

Այս փուլը ներառում է բոլոր փաստաթղթերի հավաքագրում, ծրագրային ապահովման և գործընթացների հետ կապված ցանկացած խնդրի լուծում, տվյալների միգրացիայի ավարտ և ԿՖԿՏՀ-իբոլոր մոդուլներ լիարժեք աշխատունակության ապահովում:

**1.4.4 Նախագծի պլանավորում և վերահսկում**

Ժամկետների նախնական գնահատականների հիման վրա ընտրված խորհրդատուն կամ ընկերությունը կաջակցի ՖՆ-ին՝ կազմելու ծրագրի համապարփակ պլանը և դրա իրականացման ժամանակացույցը՝ հաշվի առնելով այլ երկրներում իրականացված նմանատիպ ծրագրերի փորձը:

**2. Տեղական գրասենյակ**

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում խորհրդատուին/կազմակերպության կարող է տրամադրվել ք. Երևան Մելիք-Ադամյան 1 հասցեում գտնվող ՖՆ վարչական շենքում աշխատասենյակ, որտեղ կտեղակայվեն ծրագրի առանցքային մասնագետները:

**3. Շահերի բախում**

Խորհրդատուն մասնակցում է ԿՖԿՏՀ ծրագրային ապահովման ձեռքբերման մրցույթի բոլոր փուլերում ներկայացված հայտերի գնահատման գործընթացին, մասնավորապես,

խորհրդատվական ձայնի իրավունքով ընդգրկվում է գնահատման հանձնաժողովի կազմում և ստորագրում շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

Խորհրդատուն պետք է բացահայտի ցանկացած հնարավոր շահերի բախում, որը կարող է ազդել պահանջվող ծառայություններն անաչառ կատարելու նրա կարողության վրա:

- Շահերի բախում կարող է առաջանալ, եթե խորհրդատուն, նրա աշխատակազմը կամ փոխկապակցված կազմակերպությունները ունեն ֆինանսական, անձնական կամ այլ շահեր, որոնք կարող են ընկալվել որպես նրանց օբյեկտիվության վրա ազդող գործոններ:
- Եթե պայմանագիրը կնքելուց հետո հայտնաբերվել է շահերի բախում, Պատվիրատուն կարող է անհապաղ լուծել պայմանագիրը:
- Խորհրդատուն համաձայն է անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին, եթե սույն Պայմանագրի գործողության ընթացքում առաջանա շահերի բախում:

Խորհրդատուն որևէ նյութական շահ չի հետապնդում սույն հանձնարարականին հնարավոր հաջորդող հանձնարարականներ իրականացնելու համար, և իրավասու չի լինելու մասնակցելու ինչպես հայտարարվելիք ԿՖԿՏՀ-ի ներդման, այնպես էլ ԿՖԿՏՀ-ի ներդրման աշխատանքները համակարգող (ներառյալ ծրագրի շրջանակում աշխատող մյուս խորհրդատուների և մատակարարների աշխատանքները հսկող և դրան որակը երաշխավորող) անհատ խորհրդատուի ներգրավման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին:

**Ներածություն:** Աշխատանքի մանրամասն շրջանակը սահմանում է ԿՖԿՏՀ Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMIS, ԿՖԿՏՀ) ծրագրի հաջող ավարտի համար պահանջվող հատուկ առաջադրանքները, արդյունքները և ժամկետները: ԿՖԿՏՀ ծրագրի իրականացման ընթացքում խորհրդատուն պատասխանատու կլինի առկա փաստաթղթերի վերանայման, բարելավումների նախապատրաստման, մրցութային փաստաթղթերի նախապատրաստման, մատակարարների ընտրության հարցում աջակցություն՝ հիմնված նմանատիպ նախագծերի իրականացման համաշխարհային լավագույն փորձի վրա և Նախագծի կառավարման ծառայությունների մատուցում:

**Լավագույն պրակտիկաների դիտարկում:** Օգտվելով Խորհրդատվական ընկերության լայնածավալ փորձից՝ ՖՆ ակնկալում է, որ այս բարդ ծարգրի յուրաքանչյուր փուլում նմանատիպ նախագծերից քաղված և լավագույն պրակտիկաները կօգտագործվեն ԿՖԿՏՀ ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու համար: Սա ենթադրում է.

- Ապացուցված ռազմավարություններ: Բացահայտել և առաջարկել ռազմավարություններ, գործիքներ և մեթոդաբանություններ, որոնք հաջողությամբ են դրսևորվել նմանատիպ նախագծերում:
- Աջակցություն՝ ծրագրի ներդրման գործընթացում: Օժանդակել Պատվիրատուին հարմարեցնել և ինտեգրել լավագույն պրակտիկաներն ծրագրի կոնկրետ համատեքստում՝ ապահովելով համապատասխանությունը ԿՖԿՏՀ նպատակներին:
- Նախադեպերի ուսումնասիրություն և օրինակներ. Ներկայացնել նախադեպերի ուսումնասիրություններ և նմանատիպ նախագծերից օրինակներ՝ լավագույն պրակտիկաների կիրառումը լուսաբանելու համար:
- Լավագույն պրակտիկ խորհուրդներ. ԿՖԿՏՀ ծրագրի շրջանակներում լավագույն պրակտիկայի ընդունման վերաբերյալ մանրամասն առաջարկություններ ներկայացում
- Ռիսկերի գնահատում և նվազեցում: Անցկացնել ռիսկի մանրակրկիտ գնահատումներ և մշակել դրանց նվազեցման ռազմավարություններ ցանկացած հնարավոր խնդրի լուծման համար:

**Այս տարրերը պետք է հաշվի առնել, երբ իրականացվում են ստորև նշված առաջադրանքները:**

**Առաջադրանքներ և արդյունքներ:**

**Առաջադրանք 1: Առկա փաստաթղթերի վերանայում**

- **Նպատակ:** Գնահատել ԿՖԿՏՀ ծրագրին առնչվող փաստաթղթերի ընթացիկ վիճակը և բացահայտել բացերը, սխալները և բարելավման ենթակա ոլորտները:
- **Գործողություններ:**
  - Հավաքել և ամփոփել բոլոր համապատասխան փաստաթղթերը, ներառյալ նախաորակավորման հայտարարությունը (RFI) Տեխնիկական առաջադրանքը (RFP), ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները և առնչվող բոլոր այլ փաստաթղթերը
  - Հարցազրույցներ անցկացնել հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ նախագծի համատեքստը հասկանալու և լրացուցիչ պատկերացումներ կազմելու համար:
  - Պատրաստել համապարփակ հաշվետվություն՝ մանրամասնելով արդյունքները, ներառյալ հայտնաբերված բացերը, անհամապատասխանությունները և բարելավման կարիք ունեցող դրույթները
  - Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախապատրաստել փաստաթղթում կատարված բարելավումների առաջնահերթ ցանկը:

- Մշակել Նախարարակավորման պայմանների և Տեխնիկական առաջադրանքի և այլ համապատասխան փաստաթղթերի թարմացված տարբերակները՝ ներառելով առաջարկվող փոփոխությունները:
- Համոզվել, որ բոլոր փաստաթղթերը համապատասխանում են համապատասխան չափանիշներին և լավագույն պրակտիկային:
- Վարել աշխատանքային հանդիպումներ կամ հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ՝ առաջարկվող բարելավումները հիմնավորելու և կատարելագործելու նպատակով:

- **Արդյունքներ:**
  - Բացահայտված թերացումները և առաջարկությունները ամփոփող համապարփակ հաշվետվություններ:
  - Ամփոփած փաստաթղթերի և անցկացված հարցազրույցների ցանկ,
  - Աշխատաժողով/հանդիպումներ և շահագրգիռ կողմերի արձագանքներ:
  - Մանրամասն բարելավման ծրագիր՝ առաջնահերթ գործողություններով:
  - Մրցութային փաստաթղթերի և այլ համապատասխան փաստաթղթերի թարմացում:
  - Մասնագիտական եզրակացություն՝ միջազգային լավագույն փորձին գնման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ

**Առաջադրանք 2: Աջակցություն նախարարակավորման փուլի փաստաթղթերի պատրաստմանը:**
**Նպատակ:** Ապահովել ԿՓԿՏՀ նախարարակավորման փուլի ամբողջական, հստակ փաստաթղթերի պատրաստումը

**Գործողություններ:**

- Մշակել մրցույթի մանրամասն պահանջներ՝ ապահովելով համապատասխանեցում ծրագրի նպատակներին և լավագույն փորձին
- Մշակել մատակարարների առաջարկների գնահատման չափանիշներ և ուղեցույցներ:
- Համագործակցել իրավաբանական և գնումների թիմերի հետ՝ ապահովելու համար անհրաժեշտ բոլոր իրավական և կանոնակարգային պահանջները:

- **Արդյունքներ:**

- Մրցույթի մանրամասն պահանջներ
- Գնահատման չափանիշներ և ուղեցույց

**Առաջադրանք 3: ՖՆ և նախաորակավորման փուլի արդյունքում ընտրված մատակարարների հետ համագործակցություն՝ ուղղված ծրագրային փաստաթղթերի և մրցույթի պահանջների հստակեցման**

**Նպատակ:** Մասնակցել գնման առարկայի հստակեցմանը, վերանայել տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջները՝ ապահովելով մրցույթի համապարփակ պահանջների վերջնականացում.

**Գործողություններ:**

- Մասնակցել նախաորակավորվածների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներին՝ նախագծի բոլոր պահանջները հստակեցնելու համար
- Համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ Պատվիրատուի, նախագծային թիմի և պոտենցիալ մատակարարների հետ, կարծիքների հավաքագրման և մրցույթի պահանջների նկատմամբ ակնկալիքների հստակեցման համար
- Գնման առարկային վերաբերող ցանկացած խնդրի քննարկման և լուծման համար բոլոր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և սեմինարների կազմակերպում/աջակցություն
- Տեխնիկական յուրահատկությունները կատարելագործելու նպատակով համագործակցել տեխնիկական մասնագետների հետ՝ ապահովելու դրանց հստակությունը, համապարփակությունը և ոլորտի ստանդարտներին համապատասխանեցումը:
- Համոզվել, որ բոլոր տեխնիկական պահանջները հստակ սահմանված են և չափելի՝ պարզեցնելով դրանց գնահատումը հայտերի ներկայացման փուլում:
- Ֆունկցիոնալ մասնագետների հետ համագործակցություն՝ ֆունկցիոնալ պահանջները հստակեցնելու համար՝ ապահովելով, որ դրանք ճշգրտորեն արտացոլեն ցանկալի արդյունքները և օգտագործողի կարիքները:
- Հիմնավորել ֆունկցիոնալ պահանջները ծրագրի նպատակների և շահագրգիռ կողմերի ակնկալիքների հետ ՝ ապահովելու համար, որ դրանք իրատեսական են և հասանելի:
- Համոզվել, որ մրցույթի վերջնական պահանջները համապարփակ են և ներառում են գնման առարկայի բոլոր դրույթները և պատրաստ են ներառվելու մրցութային վերջնական փաթեթի մեջ:

- **Արդյունքներ:**

- Շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության համառոտ նկարագրություն ամփոփիչ փաստաթուղթ, որը նկարագրում է մասնակիցների հետ հանդիպումների և խորհրդակցությունների արդյունքները՝ այդ թվում քննարկման հիմնական կետերը, համաձայնեցված գործողությունները և խորհրդատուի կողմից տրամադրված ցանկացած առաջարկություն՝ մրցույթի պահանջներին շահագրգիռ կողմերի ակնկալիքները համապատասխանեցնելու համար:
- **Տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջների վերաբերյալ** հաշվետվություններ, որոնք մանրամասն նկարագրում են տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջների կատարելագործման դրույթներ: Այս փաստաթղթերը կներկայացնեն լավագույն պրակտիկաները, ոլորտի չափանիշները և խորհրդատուի կոնկրետ առաջարկությունները՝ պահանջների հստակությունն ու արդյունավետությունը բարձրացնելու համար:
- **Մրցույթի վերջնական պահանջների վերաբերյալ առաջարկություններ՝** պաշտոնական փաստաթուղթ, որտեղ ներկայացվում են խորհրդատուի առաջարկությունները վերջնական մրցութային պահանջների վերաբերյալ: Այս փաստաթուղթը ուղղորդիչ դեր կկատարի Պատվիրատուի և այլ շահագրգիռ կողմերի համար՝ մրցութային փաթեթը վերջնականացնելու դրա համապարփակությունը և նախագծի նպատակներին համապատասխանությունը երաշխավորելու համար
- **Վերանայման և հետադարձ կապի փաստաթղթավորում՝** գնման փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ խորհրդատուի խմբագրումների և առաջարկների փաստաթղթավորում: Սա կներառի մանրամասն մեկնաբանություններ, առաջարկված վերանայումներ և խորհրդատուի փորձի հիման վրա մրցույթի պահանջների հիմնավորում, ապահովելով՝ նախքան վերջնականացում բոլոր դրույթների մանրակրկիտ դիտարկումը:

**Առաջադրանք 4: Աջակցություն մրցույթի հետագա փուլերում մատակարարների ընտրության հարցում**

- **Նպատակ:** Աջակցել ՖՆ-ին ԿՖԿՏՀ ծրագրի համար լավագույն մատակարարներին գնահատելու և ընտրելու հարցում:
- **Գործողություններ:**
  - Սահմանել մատակարարների առաջարկների գնահատման հստակ և օբյեկտիվ չափանիշներ:

- Մշակել համապարփակ գնահատման մատրից, որը կօգտագործվի գնահատման գործընթացում:
- Մասնակցել հայտագրված առաջարկությունների գնահատմանը և ամփոփմանը՝ տրամադրելով փորձագիտական կարծիքներ և առաջարկություններ:
- Աջակցել պոտենցիալ մատակարարների հետ կազմակերպվող քննարկումների ու հանդիպումների՝ նրանց կողմից ներկայացված առաջարկները հստակեցնելու և ցանկացած խնդիր լուծելու համար:
- Մասնակցել վերահսկողական այցերին և պատրաստել հարցերի համապարփակ ցանկ՝ տրված լուծման ամբողջական ըմբռնումն ապահովելու համար:
- Տրամադրել հայտի, պայմանագրի և որակավորման ապահովումներ կիրառելու կամ չկիրառելու, կիրառելու դեպքում՝ դրանց չափերի և տեսակների, կանխավճարի, դրա չափի և մարման կարգի վերաբերյալ պայմանները:
- Աջակցություն ցուցաբերել ընտրության վերջնական գործընթացում՝ երաշխավորելով, որ ընտրված մատակարարը համապատասխանում են բոլոր պահանջներին և ցուցաբերում են ցանկալի արդյունքների հասնելու կարողություն:

- **Արդյունքներ:**
  - Գնահատման չափանիշներ և գնահատման համապարփակ մատրից:
  - Գնահատման հաշվետվություններ և առաջարկություններ մատակարարների ընտրության համար:
  - Հանդիպումների արձանագրություններ և ՖՆ միջոցով մատակարարներին տրամադրված պարզաբանումներ:
  - Ընտրության վերջնական հաշվետվություն մատակարարի ընտրության հիմնավորմամբ:

**Առաջադրանք 5: Ծրագրի կառավարման ծառայությունները**

- **Նպատակ:** Ապահովել Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) հաջող ներդրումը՝ տրամադրելով ծրագրի կառավարման ծառայություններ մինչև ծրագրի վերջնական ներդրումը:

- **Շարունակական առաջարկանք, գործողություններ և վերջնարդյունքներ**

Խորհրդատուն/կազմակերպությունը ակտիվորեն կմասնակցի ԿՖԿՏՀ ծրագրի իրականացմանը՝ կատարելով հետևյալ ընթացիկ պարտականությունները: Այս առաջադրանքը կիրականացվի ծրագրի պլանի հիման վրա՝ հիմնավորված ստորև նկարագրված կոնկրետ արդյունքներով և աջակցությամբ.

**Գործողություններ:**

- Ծրագրի կառավարման պլանի և մեթոդաբանության մշակում՝ հետևելով լավագույն միջազգային փորձին (օր. PMI/PMBOK, IPMA, և այլն.). Ծրագրի կառավարման պլանը պետք է համապատասխանի Տեխնիկական բնութագրերին: Ծրագրի պլանավորումը պետք է ներառի միջանկյալ և հիմնական փուլեր ուղեկցվող մշտադիտարկման թափանցիկ և փաստաթղթավորված գործընթացով:
- Պլանավորել, ներկայանալ և ակտիվորեն մասնակցել ծրագրի կառավարման հետ կապված բոլոր հանդիպումներին:
- Պատրաստել և գլխավորել **Ղեկավար կոմիտեի ամենամսյա հանդիպումները** բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
- Բացահայտել ծրագրի հնարավոր ռիսկերը, պատրաստել ռիսկերի կառավարման ամսական հաշվետվություն, կառավարել ռիսկերի քարտեզը և նախագծի ռիսկի կարգավիճակը:
- Նախագծի պլանավորումից հետո պլանավորել և մասնակցել մատակարարի հետ կանոնավոր աշխատանքային հանդիպումներին կամ նիստերին (**շաբաթական/ ամսական**). :
- Դիտարկել և համաձայնեցնել առաքման պլանավորումը՝ երաշխավորելով, որ մատակարարի գործունեությունը իրականցվում է պլանին համապատասխան և համապատասխանում է ծրագրի պահանջներին:
- Խորհրդատվություն մատուցել պատվիրատուին լավագույն փորձի և նորարարական լուծումների վերաբերյալ՝ ծրագրի կառավարման և իրականացման գործընթացներ բարելավելու նպատակով:
  - Մատակարարի հետ համագործակցության պարբերականությունը և շրջանակը,
  - Հաշվետվողականության վերաբերյալ մանրամասներ՝ ներառյալ հաշվետվությունների և զեկույցների ներկայացման պարբերականությունը և բովանդակությունը:
- Քննարկել պլանը Նախագծի Ղեկավար կոմիտեի հետ:

***Բ) Ստանձնել Նախագծի կառավարումը և ապահովել հաղորդակցությունը մասնակիցների և շահառուների միջև***

- Պլանավորել, կազմակերպել և գլխավորել Նախագծի կառավարման հետ կապված հանդիպումներ, մասնավորապես՝ Ղեկավար կոմիտեի ամենամսյա հանդիպումները՝ ապահովելով մասնակիցների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը, հաղորդակցությունը, նպատակների սահմանումը և նպատակների կատարման հաշվետվողականությունը:
- Ստանձնել Ղեկավար կոմիտեի քարտուղարի և Ադմինիստրատիվ ղեկավարի դերը՝ միևնույն ժամանակ կոմիտեի կողմից որոշումների կայացման իրավունքը վերապահելով Պատվիրատուի՝ կոմիտեում անդամակցող ներկայացուցիչներին:
- Անընդհատ կերպով մշտադիտարկել Նախագծի իրականացման ընթացքը և արտահերթ հանդիպումների, քննարկումների կամ հաղորդակցության անհրաժեշտության առաջացման դեպքում անհապաղ ձեռնարկել համապատասխան գործողությունները:

KPMG

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

# Առաջադրանք 6. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

***Գ) Վերլուծել Նախագծին հատուկ ռիսկերը և շարունակական քայլեր ձեռնարկել բացահայտված ռիսկերի կառավարման համար***

- Օգտվելով նմանատիպ ծրագրերի իրականացման մեր փորձից, Նախագծի շրջանակներում հասանելի տեղեկատվությունից և շահառուների հետ հաղորդակցությունից՝ բացահայտել Նախագծի հնարավոր ռիսկերը և ամփոփել դրանք:
- Անդրադարձ կատարել բացահայտված ռիսկերից յուրաքանչյուրին՝ մշակելով ռիսկերի կառավարման և դրանց ազդեցության զսպման մոտեցումներ:
- Պատրաստել ռիսկերի քարտեզ, որտեղ նկարագրված կլինեն տվյալ պահի դրությամբ առկա ռիսկերը, դրանց նյութականանալու հավանականությունը և զսպման մոտեցումները: Պարբերաբար թարմացնել և վերանայել  ռիսկերի քարտեզը՝ հաշվի առնելով նախագծի ընթացքը և Ղեկավար կոմիտեի ամենամսյա հանդիպումների ժամանակ ներկայացնել ռիսկերի քարտեզի ընթացիկ կարգավիճակը:

***Դ) Ապահովել հաղորդակցություն մատակարարի հետ և համակարգել վերջինիս կողմից կատարվող աշխատանքները***

- Սահմանել Մատակարարի հետ պարբերական աշխատանքային հանդիպումների ժամանակացույց, որը կհամապատասխանի Նախագծի ակնկալվող վերջնարդյունքներին և դրանց առաքման ժամանակացույցին, և թույլ կտա սահմանել Մատակարարի գործունեության նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն:
- Հստակ հաղորդակցության միջոցով ապահովել Մատակարարի կողմից իր առջև դրված խնդիրների և դրանց լուծման վերջնաժամկետների ընկալումը: Կազմակերպել խնդիրների լուծման և վերջնաժամկետների պահպանման վերահսկողությունը և հաշվետվողականությունը:
- Կատարել կապող օղակի դեր Մատակարարի և Պատվիրատուի միջև՝ ապահովելով հաղորդակցություն և Մատակարարի կողմից Պատվիրատուի ակնկալիքների և սպասումների հստակ պատկերացում:
- Վերահսկել Մատակարարի կողմից կատարվող աշխատանքների որակը SS ճարտարապետության և գործընթացների կազմակերպման տեսանկյունից: Կիրառել միջազգային լավագույն փորձը և Խորհրդատուի մասնագիտական հմտությունները՝ ապահովելու Մատակարարի գործունեության ողջ ընթացքում կատարված աշխատանքների սահուն ընթացքը և Մատակարարի կողմից որակի վերահսկողության ընթացակարգերի կիրառումը:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 6. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

### ***Ե) Տրամադրել ընթացիկ աջակցություն և խորհրդատվություն Պատվիրատուին***

- Նախագծի ողջ ընթացքում աջակցել Պատվիրատուին՝ առաջարկելով Նախագծի կառավարման առաջադեմ մոտեցումներ, որոնք լայնորեն կիրառելի են միջազգային փորձում, ինչպես նաև Խորհրդատուի կողմից նախկինում իրականացված համանման ծրագրերի ժամանակ օգտագործված մեխանիզմներ:
- Շարունակաբար վերահսկել Մատակարարի կողմից կատարվող աշխատանքները, ներկայացնել վերջնարդյունքները Պատվիրատուին: Աջակցել Պատվիրատուին հավաստիանալ, որ Մատակարարի կողմից առաքված վերջնարդյունքները համապատասխանում են տեխնիկական առաջադրանքով սահմանված բնութագրերին և Պատվիրատուի սպասումներին:
- Մշակել ընթացակարգ, համաձայն որի պետք է ընդունվեն Նախագծի վերջնարդյունքները: Ընթացակարգի նպատակն է աջակցել Պատվիրատուին վերջնարդյունքների գնահատման և ընդունման մասին որոշման կայացման հարցում, ինչպես Նախագծի առանձին վերջնարդյունքների կամ դրանց ենթափուլերի, այնպես էլ նախագծի վերջում տրամադրվող ավարտուն լուծման՝ ԿՖԿՏՀ համակարգի վերաբերյալ:
- Համակարգել Պատվիրատուի և Նախագծի շահառուների վերապատրաստման գործընթացը՝ ապահովելով Մատակարարի կողմից համապատասխան ուսումնական նյութերի պատրաստումը և նոր ներդրված համակարգերի/մոդուլների կիրառման վերաբերյալ շահառուների մասնագիտական կարողությունների զարգացումը:

### ***Զ) Իրականացնել ԿՖԿՏՀ համակարգի տեխնիկական տեսանկյունից վերջնարդյունքների վերլուծություն***

ԿՖԿՏՀ համակարգի մոդուլների ստացման ընթացքում կկատարվեն հետևյալ աշխատանքները.

- Պատվիրատուին փոխանցված մոդուլների փորձարկումների անցկացում տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից
- Յուրաքանչյուր մոդուլի բոլոր հիմնական գործառույթների ճիշտ աշխատանքի վերլուծություն
- Մոդուլների ճիշտ փոխազդեցության վերլուծություն միմյանց և արտաքին համակարգերի հետ
- Ինտեգրման լուծումների կայունության և կատարողականի գնահատում
- Յուրաքանչյուր մոդուլի օգտագործողի ինտերֆեյսի հարմարավետության և ինտուիտիվության գնահատում
- Հայտնաբերված թերություններով և բարելավման առաջարկություններով հաշվետվությունների կազմում
- Ֆունկցիոնալության օպտիմալացման և բարելավման վերաբերյալ առաջարկությունների ձևավորում

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 6. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

***2) Ապահովել պատշաճ հաշվետվողականություն և Նախագծի ընթացքի մասին ներկայացնել պարբերական հաշվետվություններ/զեկույցներ***

- Նախագծի ողջ ընթացքում վերահսկել պատվիրատուի կողմից կատարվող աշխատանքները, նախագծի ընթացքը, առաջացող մարտահրավերները, ինչպես նաև բացահայտված ռիսկերը և պատրաստել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:
- Հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին՝ համոզվելու համար, որ նախագիծն ընթանում է Պատվիրատուի սպասումներին համահունչ:

Նախագծի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և հաշվետվողականության ապահովման նպատակով կպատրաստվեն հետևյալ հաշվետվությունները և կտրամադրվեն Պատվիրատուին.

| Հաշվետվությունը | Ժամկետը | Նկարագրությունը |
|---|---|---|
| Մեկնարկային հաշվետվություն | Պայմանագրի կնքումից հետո՝ 4 շաբաթվա ընթացքում | Ամփոփ հաշվետվություն, որը կպարունակի տեղեկատվություն Նախագծի ողջ ընթացքում նախատեսվող գործողությունների և դրանց մասնակիցների վերաբերյալ: Կներկայացվեն ակնկալվող վերջնարդյունքները և դրանց տրամադրման ժամանակացույցը: Պատվիրատուի հաստատմանը կներկայացվեն ամսական և եռամսյակային հաշվետվությունների առաջարկվող ձևաչափերը: |
| Ամսական հաշվետվություն | Յուրաքանչյուր հաջորդ ամսվա 10-րդ օրը | Պարունակում է ամսվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփումը՝ ներառյալ իրականացված նպատակները, առաջացած մարտահրավերները և սահմանված վերջնարդյունքների/գործողությունների կարգավիճակը: |
| Եռամսյակային հաշվետվություն | Եռամսյակին հաջորդող ամսվա 10-րդ օրը | Պարունակում է եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների ամփոփումը՝ նույն սկզբունքով, ինչ ամսական հաշվետվությունները: |
| Տարեկան հաշվետվություն | Նախագծի մեկնարկից հետո ամեն 12 ամսին հաջորդող ամսվա 15-րդ օրը | Պարունակում է տարեկան կտրվածքով կատարված աշխատանքների ամփոփումը: Ներառում է Նախագծի նպատակների կարգավիճակը, կատարված վերջնարդյունքները, տարվա ընթացքում բացահայտված մարտահրավերները և առաջիկա տարվա ընթացքում նախատեսվող գործողությունները: |
| Նախագծի միջանկյալ հաշվետվություն | Նախագծի մեկնարկից 2 տարի անց՝ հաջորդող ամսվա 15-րդ օրը | Այս հաշվետվությունը պարունակում է Նախագծի միջնակետի դրությամբ կատարված աշխատանքները, իրականացված նպատակները, Խորհրդատուի կողմից ներկայացված վերջնարդյունքները, բացահայտված և հաղթահարված մարտահրավերները և ամփոփում է Նախագծի կարգավիճակը տվյալ պահի դրությամբ: |
| Նախագծի ավարտական հաշվետվություն | Նախագծի ավարտից հետո՝ 30 օրյա ժամկետում | Այս հաշվետվությունը ամփոփում է Նախագծի ողջ ընթացքը և ավարտը, պարունակում է սահմանված նպատակների իրագործման ընթացքի ամփոփ նկարագիրը՝ ներառյալ առաջացած մարտահրավերները և գրանցված հաջողությունները: |

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 6. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

Նախագծի կառավարումը ստանձնած թիմը կներկայացնի վերոնշյալ հաշվետվությունները Պատվիրատուին էլեկտրոնային տարբերակով, հայերեն լեզվով: Պատվիրատուի պահանջի դեպքում հաշվետվությունները կարող են ներկայացվել նաև թղթային տարբերակով և/կամ էլեկտրոնային կրիչի միջոցով:

Պատվիրատուն ստացված հաշվետվությունները կվերանայի ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պարզվի, որ որևէ տարր/դրույթ անընդունելի է, ապա գրավոր պատասխան կտրվի Խորհրդատուին: Այնուհետև վերջինիս կտրամադրվի 10 աշխատանքային օր՝ հաշվետվությունը համապատասխան վերանայելու համար: Վերջնական հաստատման գործընթացը սահմանվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Նախագծի կառավարման արդյունավետության ապահովման նպատակով՝ Խորհրդատուն իր կարողությունները կենտրոնացնելու է հետևյալ հիմնական ֆունկցիոնալ ուղղություններով.




© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

# Անցյալում իրականացված նախագծերի արդյունքներ և փորձառություն

## 1. Կառավարության ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգ, Հնդկաստանի կառավարություն (1/2)

| | |
|---|---|
| **Հաճախորդ** | – Հնդկաստանի կառավարության Ֆինանսների նախարարության Ծախսերի վերահսկողության վարչության Հաշիվների գլխավոր վերահսկիչ |
| **Ժամանակաշրջան** | – 2024թ. հուլիսից 2027թ. հունիս (ընթացքում է) |
| **Նախագծի նպատակները** | – Հանրային ֆինանսների կառավարման համակարգի Ծրագրի կառավարման գրասենյակի (ԾԿԳ) հիմնում (պետական նախագիծ).<br>– Հնդկաստանի կառավարությունն իրականացնում է բարեփոխումներ հանրային ֆինանսների կառավարման ոլորտում և վերանախագծում է գործող ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգը (ՖԿԻՏՀ) Հնդկաստանի կառավարության ՖԿԻՏՀ արդիականացնելու նպատակով: Հնդկաստանի կառավարության ՖԿԻՏՀ-ն իրենից ներկայացնում է հիմնական ՏՏ համակարգը, որը հնարավորություն է տալիս կառավարել ծախսերը, եկամուտները և վարել հաշվապահական հաշվառում: |
| **Քեյ-Փի-Էմ-Ջի-ի դերի և մոտեցման նկարագրությունը** | ***<u>Փուլ Ա (Նախագծի կառավարման գծով խորհրդատվություն և մոնիտորինգ)</u>***<br>▪ ՖԿԻՏՀ նախագծի կառավարում և մոնիտորինգ,<br>▪ Ծառայության մակարդակի համաձայնագրին (SLA) վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրություն և մոնիտորինգ ՏՏ ծառայություններ մատուցող ընկերության այլ գործակալությունների համար,<br>▪ Աջակցություն առկա 30+ տարբեր մոդուլների հետ կապված և շարունակական վերանախագծում,<br>▪ Ստանդարտ գործառնական ընթացակարգի, ֆունկցիոնալության տեխնիկական պահանջների, բիզնես պահանջների փաստաթղթի, լուծումների պլանի, նախագծի սխեմատիկ կառուցվածքի և օգտագործողների ուղեցույցների ուսումնասիրություն և մշակում,<br>▪ Պետության մակարդակով իրականացվող ՖԿԻՏՀ նախաձեռնության հետ կապված եզրահանգումների ներկայացում,<br>▪ Նախապատրաստում համակարգի տեխնիկական պահանջների և լուծումների պլանի մշակմանը՝ վերանայված ֆունկցիոնալության տեխնիկական պահանջների համաձայն,<br>▪ Նախագծային փաստաթղթերի համաձայն ՖԿԻՏՀ համակարգերի մշակման մոնիտորինգ և վերահսկողություն,<br>▪ Տվյալների միգրացիայի/պատրաստման պլանի ուսումնասիրություն և մշակման ավարտ: Տեխնիկական փաստաթղթերի, այդ թվում՝ օգտագործողների ուղեցույցների, ուսումնական ձեռնարկների, համակարգի տեխնիկական բնութագրերի ուսումնասիրություն, որոնք կազմվել են աշխատանքների ավարտման և օգտագործման համար,<br>▪ Համագործակցություն պետական մարմինների աշխատակիցների խմբերի հետ,<br>▪ Համագործակցություն համակարգերի ինտեգրատորի/Ազգային տեղեկատվական կենտրոնի և նախագծին մասնակցող այլ թիմերի հետ՝ պլանավորման աշխատանքները և ռազմավարության իրականացումը ղեկավարելու համար,<br>▪ Աջակցություն առաջընթացի, խնդիրների և խնդիրների լուծման մոնիտորինգի և նախագծի արդյունքների ընդունման գործընթացում,<br>▪ Գնահատում համակարգի ներդրումից հետո, ուսումնասիրության հաշվետվության և ԿՖԿԻՏՀ նախաձեռնության կայունության ապահովմանն ուղղված ուղիների ներկայացում,<br>▪ Աշխատանքների համակարգում տեխնիկական հարցերի համար պատասխանատու ղեկավարների հետ նոր համակարգի մշակման և առկա համակարգի կատարելագործման համար, ծառայություններ մատուցող ընկերությունների և այլ կազմակերպություններ հետ, |

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## 1. Կառավարության ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգ, Հնդկաստանի կառավարություն (2/2)

| | |
|---|---|
| **Քեյ-Փի-Էմ-Ջի-ի դերի և մոտեցման նկարագրությունը** | ▪ Աջակցություն ուսումնական նյութերի մշակման, կարողությունների զարգացման, սեմինարների և դասընթացների կազմակերպման գործում։<br>**Փուլ Բ (Տեխնիկական աջակցություն)**<br>▪ SS ճանապարհային քարտեզի նախագծում ԿՖԿԻՏՀ համար,<br>▪ Ռիսկերի դասերի մշակում՝ օգտագործելով մեքենայական ուսուցումը և արհեստական բանականությունը,<br>▪ Single Sign-On (տեխնոլոգիա, որը թույլ է տալիս օգտվողին մեկ օգտվողի անունով մուտք գործել տարբեր հավելվածներ և ծառայություններ) նախագծում և ներդնում ԿՖԿԻՏՀ լանդշաֆտում,<br>▪ Տեղակայման ճարտարապետության (Deployment Architecture) ուսումնասիրություն,<br>▪ Գործառնությունների արդիականացման նախապատրաստում,<br>▪ SS նախագծի կառավարում սկզբից մինչև վերջ (end to end management),<br>▪ Աջակցություն Համակարգերի ինտեգրատորին տեխնիկական բաղկացուցիչների հետ կապված,<br>▪ Աջակցություն նոր մոդուլների համար հայեցակարգի հիմնավորումների պատրաստման գործում,<br>▪ Աջակցություն ԿՖԿԻՏՀ համար ձեռնարկությունների ճարտարապետության, ենթակառուցվածքի ճարտարապետության, լուծումների և ինտեգրման ճարտարապետության, համակարգի թրաֆիկի մոդելի և սեզոնայնության ուսումնասիրության և նախագծման գործում,<br>▪ Աջակցություն SS ոլորտի լավագույն պրակտիկայի և ստանդարտների կիրառման գործում,<br>▪ Աջակցություն SS հավելվածների, այդ թվում՝ ցանկացած բջջային հավելվածի, արտաքին պորտալների հետ ինտեգրման, տվյալների փոխանակում, վեբ հավելված և այլնի անվտանգության ստուգման գործում։<br>**Փուլ Գ (Մրցութային գործընթացի ղեկավարում)**<br>▪ Առկա SS էկոհամակարգի բացերի վերլուծության իրականացում և փաստացի վիճակի (as-is) ուսումնասիրության հաշվետվության կազմում,<br>▪ Աշխատանքի ընդհանուր շրջանակի կազմում իրականացվող ցանկացած ֆունկցիայի համար,<br>▪ Աջակցություն մրցույթային գործընթացի ղեկավարման ողջ ընթացքում,<br>▪ Աջակցություն ծառայությունների կամ սարքավորումների գնման համար ֆունկցիոնալ և տեխնիկական բնութագրերի մշակման գործում,<br>▪ Աջակցություն հայտերի (տեխնիկական և ֆունկցիոնալ) գնահատման գործընթացում, |
| **Նախագծի հիմնական արդյունքները** | ա) Հաջորդ սերնդի Կառավարության ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգի (ԿՖԿԻՏՀ) նախագծում,<br>բ) Ճանապարհային քարտեզի մշակում հաջորդ սերնդի ԿՖԿԻՏՀ համար,<br>գ) Բյուջետային ցիկլի բոլոր գործընթացների վերակազմակերպում,<br>դ) Գործող համակարգի իր փաստացի վիճակում (as-is) ուսումնասիրություն և բարելավում պահանջող ոլորտների հայտնաբերում՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Համագործակցություն Հաշիվների գլխավոր վերահսկիչի և Համակարգերի ինտեգրատորի հետ առաջարկները ներդնելու համար,<br>ե) SS լանդշաֆտի ուսումնասիրություն և վերանախագծում և արհեստական բանականության, տվյալների վերլուծության, մեքենայական ուսուցման օգտագործման տարբերակների որոշում՝ արդյունավետությունը բարձրացնելու և տվյալների վրա հիմնված որոշումներ կայացնելու նպատակով,<br>զ) Հանրային ֆինանսների կառավարման առանցքային մոդուլների |

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## 2. Ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգ, Չհատիսգարհի կառավարություն

| | |
|---|---|
| **Հաճախորդ** | — Չատիսգարհի կառավարության Ֆինանսական վարչության Ինստիտուցիոնալ ֆինանսների տնօրինություն |
| **Ժամանակաշրջան** | – 2024թ. հուլիսից 2027թ. հունիս (ընթացքում է) |
| **Նախագծի նպատակները** | – Խորհրդատվություն Չհատիսգարհի կառավարության (Հնդկաստան) համար Ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգի (ՖԿԻՏՀ) ներդրման նախագծի ղեկավարման գծով (նահանգային ծրագիր) |
| **Քեյ-Փի-Էմ-Ջի-ի դերի և մոտեցման նկարագրությունը** | **Փուլ Ա (ՖԿԻՏՀ ներդրման նախագծի ղեկավարման գծով խորհրդատվություն)**<br>▪ Ֆունկցիոնալության տեխնիկական պահանջների, համակարգի տեխնիկական պահանջների լուծումների պլանի ստուգում,<br>▪ Այլ նահանգներում իրականացվող ՖԿԻՏՀ նախաձեռնության հետ կապված եզրահանգումների ներկայացում,<br>▪ Աջակցություն վերանայված ֆունկցիոնալության տեխնիկական պահանջների համաձայն համակարգի տեխնիկական պահանջների և լուծումների պլանի մշակման գործում,<br>▪ Նախագծային փաստաթղթերի համաձայն ՖԿԻՏՀ համակարգերի մշակման մոնիտորինգ և վերահսկողություն,<br>▪ Տվյալների միգրացիայի/պատրաստման պլանի ուսումնասիրություն և մշակման ավարտ: Տեխնիկական փաստաթղթերի, այդ թվում՝ օգտագործողների ուղեցույցների, ուսումնական ձեռնարկների, համակարգի տեխնիկական բնութագրերի ուսումնասիրություն, որոնք կազմվել են աշխատանքների ավարտման և օգտագործման համար,<br>▪ Համագործակցություն պետական մարմինների աշխատակիցների խմբերի, Համակարգերի ինտեգրատորի/Ազգային տեղեկատվական կենտրոնի և նախագծին մասնակցող այլ թիմերի հետ՝ պլանավորման աշխատանքների և ռազմավարության իրականացման ղեկավարման համար «ճանապարհային քարտեզ» մշակելու համար,<br>▪ Աջակցություն առաջընթացի, խնդիրների և խնդիրների լուծման մոնիտորինգի և նախագծի արդյունքների ընդունման գործընթացում,<br>▪ Գնահատում համակարգի ներդրումից հետո, ուսումնասիրության հաշվետվության և ԿՖԿԻՏՀ նախաձեռնության կայունության ապահովմանն ուղղված ուղիների ներկայացում,<br>▪ Տեխնիկական առաջադրանքի կազմում և մրցութային գործընթացի կառավարում հաջորդ սերնդի ԿՖԿԻՏՀ համար՝ նահանգում ԿՖԿԻՏՀ 2.0-ի մշակման և արդիականացման համար Համակարգերի ինտեգրատորին ներգրավելու նպատակով,<br>**Փուլ Բ (Տեխնիկական աջակցություն հանրային ֆինանսների կառավարման գործընթացն ամրապնդելու նպատակով)**<br>▪ Հանձնառության հսկողության քաղաքականություն՝ մշակված ընթացակարգերի/ուղեցույցների հետ միասին,<br>▪ Պետական ներդրումների կառավարման հայեցակարգ կապիտալ ներդրումների նախագծերի համար<br>▪ Մակրոֆիսկալ մոդելի մշակում միջնաժամկետ ֆիսկալ հայեցակարգի շրջանակում՝ երկարաժամկետ մակրոտնտեսական և ֆիսկալ ցուցանիշների կանխատեսման համար,<br>▪ Ամբողջական և ժամանակին ներկայացվող պետական ֆինանսական հաշվետվություններ՝ հասանելի հանրային տիրույթում [ՖԿԻՏՀ54/e-Kosh համակարգեր],<br>▪ Պետական բյուջեի ձեռնարկի նախագծի մշակում<br>▪ Չհատիսգարհի ֆինանսական կոդեքսի» և «Չհատիսգարհի գանձապետական կոդեքսի» թարմացում՝ բիզնես գործընթացների և SS համակարգերի օգտագործմամբ պայմանավորված փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով, |

KPMG

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## 2. Ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգ, Չիատիսգարհի կառավարություն

| | |
|---|---|
| **Քեյ-Փի-Էմ-Ջի-ի դերի և մոտեցման նկարագրությունը** | • Հանրային ֆինանսների կառավարման և հանրային գնումների վերաբերյալ դասընթացների կազմակերպում Չիատիսգարհի կառավարության աշխատակիցների համար,<br>• Ծառայությունների գնման կանոնների և ստանդարտ մրցութային փաստաթղթեր մշակում բոլոր տեսակի գնումների համար:<br>**Փուլ Գ (Աջակցություն նախագծի կառավարմանը Համաշխարհային բանկի ընդհանուր ծրագրի ուսումնասիրության և մոնիտորինգի համար (Չիատիսգարհի Հանրային ֆինանսների կառավարման և հաշվետվողականության ծրագրի))**<br>• Աջակցություն Չատիսգարհի կառավարության Ինստիտուցիոնալ ֆինանսների տնօրինությանն առաջընթացի կանոնավոր մոնիտորինգի գործընթացների մշակման և ներդրման գործում՝ DLI-ները ժամանակին ապահովելու համար՝ բոլոր շահառուների արդյունավետ համակարգման միջոցով:<br>• Աջակցություն թիմին DLI-ների ստուգման գործում և արդյունքների փաստաթղթավորման ապահովում,<br>• Աջակցություն նախագծի Ղեկավար հանձնաժողովի նիստերի կազմակերպմանը եռամսյակային կտրվածքով,<br>• Աջակցություն Չատիսգարհի կառավարությանը ծրագրի տարեկան և կիսամյակային ուսումնասիրությունների իրականացման գործում՝ ձեռք բերված առաջընթացի համար տեղեկատվական փաստաթղթեր պատրաստելու միջոցով |
| **Նախագծի հիմնական արդյունքները** | ա) Ֆինանսների կառավարման ինտեգրված տեղեկատվական համակարգի (ՖԿԻՏՀ) նախագծում և ներդնում,<br>բ) Հանձնառության հսկողության քաղաքականության, ուղեցույցների, Հանձնառության հսկողության համակարգի նախագծում և ներդնում,<br>գ) Ներկայիս Պետական ներդրումների կառավարման (ՊՆԿ) հայեցակարգի ախտորոշիչ/դիագնոստիկ ուսումնասիրություն և ՊՆԿ նոր հայեցակարգի նախագծում,<br>դ) Միջնաժամկետ ֆիսկալ հայեցակարգի նախագծում,<br>ե) Մակրոֆիսկալ մոդելի մշակում միջնաժամկետ մակրոֆիսկալ կանխատեսման հայեցակարգի շրջանակում երկարաժամկետ մակրոտնտեսական և ֆիսկալ ցուցանիշները կանխատեսելու համար, այդ ուղղությամբ օգտագործողի ուղեցույցների և ուսումնական ծրագրի մշակում,<br>զ) Դասընթացների պլանի կազմում ՊՆԿ և Հանրային գնումների ոլորտների 3000 աշխատակիցների համար,<br>է) Ծրագրի կառավարում Համաշխարհային բանկի ընդհանուր ծրագրի համար: |

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

# Ծանուցում

Սույն առաջարկը պատրաստված է բացառապես այն կողմի կամ կազմակերպության օգտագործման համար, որին ուղղված է այն: Հետևաբար, այս փաստաթուղթը համարվում է Քեյ-Փի-Էմ-Ջի ՍՊԸ սեփականություն և չի կարող հասանելի լինել որևէ մեկին, բացառությամբ հասցեատիրոջ կամ հասցեատիրոջ կազմակերպության այն անձանց, որոնք նշանակված են գնահատելու առաջարկը: Մեր առաջարկը կարող  հասանելի լինել այլ անձանց կամ կազմակերպություններին միայն մեր գրավոր համաձայնությամբ:

Սույն առաջարկը պատրաստվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի կողմից, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն է և մասնակիցների  երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին («KPMG International») անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ:

«KPMG International»-ը և վերջինիս  կապակցված կազմակերպությունները չեն մատուցում ծառայություններ հաճախորդներին: Որևէ անդամ ընկերություն իրավասու չէ պարտադրել կամ պարտավորեցնել «KPMG International»-ին, վերջինիս կապակցված կազմակերպություններից որևէ մեկին կամ ցանկացած այլ անդամ ընկերությանը հանձն առնել պարտականություններ երրորդ անձանց հանդեպ: «KPMG International»-ը կամ վերջինիս կապակցված կազմակերպություններն իրենց հերթին իրավասու չեն պարտադրել կամ պարտավորեցնել ցանկացած անդամ ընկերությանը հանձն առնել նման պարտականություններ:

Սույն ոչ պարտավորեցնող առաջարկը գաղտնի է, և առաջարկում նշված ծառայությունների մատուցումը բոլոր առումներով ենթակա է համապատասխան պայմանագրի բանակցման, համաձայնեցման և ստորագրման, այդ թվում՝ ծառայությունների շրջանակի համաձայնեցման: «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն իրավունք ունի փոխել սույն առաջարկի պայմանները կամ հրաժարվել ծառայությունների մատուցումից  հաճախորդի և աշխատանքի ընդունման համար նախատեսված «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի կիրառելի ընթացակարգերն իրականացնելուց հետո, ներառյալ շահերի բախման բացակայության և անկախության հետ կապված ստուգումները և, կիրառելի լինելու դեպքում, աուդիտի կոմիտեի հաստատումը: Սույն առաջարկում ներկայացված որոշ կամ բոլոր ծառայությունները կարող է թույլատրելի չլինել մատուցել «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աուդիտի բաժնի հաճախորդներին և վերջիններիս աֆիլացված կամ կապակցված կազմակերպություններին: Սույն առաջարկում ներառված անձնական տվյալները ենթակա են մշակման ՀՀ օրենսդրության համաձայն.

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

_______________ Ա. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02529689
Հ/Հ 1510000944344363
Արարատբանկ ԲԲԸ
Տնօրեն՝

_______________ Ի. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

KPMG

*ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ*

# Տեխնիկական Առաջարկ

*28 Օգոստոսի 2024*

# Բովանդակություն


| | |
|---|---|
| Ամփոփ նկարագիր | 4 |
| Նախագծի պահանջներ | 7 |
| Մեթոդաբանություն | 14 |
| Աշխատանքային թիմի փորձառություն և որակավորում | 36 |
| Անցյալում իրականացված նախագծերի արդյունքներ և փորձառություն | 61 |
| Ծանուցում | 68 |


© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

# Ամփոփ նկարագիր

## Առաջադրանքի նպատակը

Հայաստանը վերջին տարիներին ձեռնարկել է **Հանրային ֆինանսների կառավարման** լայնածավալ բարեփոխումներ, որոնք ամրապնդել են ընդհանուր համակարգը և հանրային ներդրումների կառավարման գործընթացները: Այս փոփոխությունները ներառում են միջնաժամկետ ծախսերի շրջանակի ներդրումը 2003թ.-ին, կատարողականի վրա հիմնված բյուջետավորման ներդրումը 2017թ.-ին և ԳՀԾ ռազմավարության 2019-2023թթ.-ի վերջին տարբերակը:

ՀՀ Ֆինանսների նախարարությունը 2020 թվականից նախաձեռնել է **կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի** (ԿՖԿՏՀ) ներդրման գործընթաց (այսուհետև՝ Նախագիծ)՝ նպատակ հետապնդելով Հանրային ֆինանսների կառավարման գործընթացների թվայնացման ճանապարհով բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման  արդյունավետությունը, որակը և թափանցիկությունը, համակարգի հաշվետվողականությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ակնկալվում է, որ **Նախագիծն իրականացվելու է 36-51 ամսվա ընթացքում** և իրենից ներկայացնելու է ԿՖԿՏՀ-ի նախագծման և ներդրման համար մրցույթի անցկացում և Մատակարարի ընտրություն, ինչից հետո Մատակարարի կողմից համակարգի ներդրում և գործարկում, ինչպես նաև ներկայումս գործող համակարգերից դեպի ԿՖԿՏՀ անցման ապահովում:

Անհրաժեշտ ծառայությունների նպատակն է ստեղծել **անկախ նախագծային գրասենյակ,** որը կղեկավարի ԿՖԿՏՀ ներդրման գործընթացը, և կապահովի Նախագծի նպատակների իրականացումը՝ համաձայն Տեխնիկական առաջադրանքի:

## Ակնարկ KPMG – ի մասին

**KPMG** ցանցի անդամ ընկերությունները գործում են **143 երկրներում՝** ներառելով **270,000 մասնագետներ**: Մենք տարիներ ի վեր աջակցում ենք պետական, մասնավոր և հանրային կազմակերպություններին իրագործել իրենց առջև դրված նպատակները: **KPMG-ն հավատարիմ է որակին և սպասարկման գերազանցությանը՝** ապահովելով հանրության կողմից բարձր վստահություն իր վարքագծով ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ անձնական տեսանկյունից:

**KPMG-ն Հայաստանում բացեց իր գրասենյակը 1997 թվականին** Երևանում և առաջինն էր «Մեծ քառյակ» միջազգային աուդիտորական և խորհրդատվական ընկերություններից, որը լիցենզավորվեց Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից: «Քեյ Փի Էմ Ջի Արմենիա»-ն զգալիորեն աճել է իր անձնակազմի, մասնագիտական կարողությունների և տեղական փորձի ու ավանդույթների առումով: Գրասենյակը Երևանում ներառում է ավելի քան 80 աշխատակից:

Ներկայումս **KPMG-ին միակ «Մեծ քառյակ» ընկերությունն** է Հայաստանում, որն **ունի լիարժեք խորհրդատվական թիմ՝** ավելի քան 20 տարի փորձով տեղական և ռեգիոնալ շուկաներում:  KPMG Արմենիայի խորհրդատվական թիմը բազմիցս համագործակցել և հաջողությամբ իրականացրել է նախագծեր ՀՀ պետական մարմինների հետ, ներառյալ՝ **Պետական եկամուտների կոմիտեն, Ազգային ժողովը, Շրջակա միջավայրի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Կադաստրի կոմիտեն և այլն**:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Նախագծի իրականացման հիմնարար սկզբունքները

**Նորարարություն և միջազգային փորձագետների ներգրավում.** Նախագծի իրականացմանը աջակցելու և հավելյալ տեխնիկական ռեսուրսներ ներգրավելու նպատակով Խորհրդատուն գործի է դնում ոչ միայն իր տեղական ներուժը, այլ նաև ներգրավում է **ոլորտային լավագույն փորձագետներին** իր գլոբալ ցանցից՝ աջակցելով իր հաճախորդների ռազմավարական նպատակների իրագործմանը: Սույն Նախագծի շրջանակներում մենք ներգրավել ենք մեր առաջատար մասնագետներին **KPMG Ֆիլիպինների, Հնդկաստանի և Ղազախստանի** ընկերություններից, ովքեր ունեն համանման ծառայությունների մատուցման զգալի փորձ, ինչպես նաև հրավիրել ենք **անկախ փորձագետների**, ովքեր կարծում ենք իրենց փորձով նշանակալի ներդրում կունենան Նախագծի նպատակների իրագործմանը:

**Կենտրոնացում նպատակների վրա.** Նախագծի շրջանակներում իրականացված բոլոր գործողությունները ուղղված են **նախապես սահմանված և հաստատված վերջնարդյունքների կատարմանը:** Պարբերաբար անցկացվող ընթացիկ մոնիտորինգը և գնահատումը հնարավորություն են տալիս չափել նախագծի առաջընթացը և արդյունավետությունը:

**Գործնական իրագործում.** Առանձնակի կարևորություն և տրվում վերջնարդյունքների գործնական իրագործելիությանը՝ հաշվի առնելով Պատվիրատուի ինստիտուցիոնալ կարողությունները, ռեսուրսները և ոլորտի արդի տենդենցները: Վերջնարդյունքների կիրառելիության և գործող համակարգերի հետ ինտեգրելիության ապահովման նպատակով՝ նախատեսվում է **ապահովել ընթացիկ համագործակցություն Նախագծի շահառուների և մասնակիցների հետ**:

**Արդյունավետ կառավարում.** Նախագծի իրականացման ընթացքում կարևորվում են շահառուների մասնակցության, ներգրավվածության և համագործակցության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները: Այս մոտեցումները թույլ են տալիս **շահառուների մոտ խորացնել նախագծի նկատմամբ սեփականության զգացողությունը,** ինչն էլ իր հերթին հեշտացնում է կարողությունների զարգացումը և վերջնարդյունքների անցնցում ներդրումը:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

# Նախագծի պահանջներ

## Նախագծի պահանջները և նպատակները

ՀՀ Ֆինանսների նախարարությունը 2020 թվականից նախաձեռնել է **կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)** ներդրման գործընթաց՝ նպատակ հետապնդելով ՊՖԿ (Պետական ֆինանսների կառավարման) հիմնական գործընթացների թվայնացման ճանապարհով բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությունը, որակը և թափանցիկությունը, ինչպես նաև ՊՖԿ համակարգի հաշվետվողականությունը: ԿՖԿՏՀ ներդրման հիմնադրույթները ամրագրված են ՀՀ կառավարության 28.11.2019թ. N 1716-L որոշմամբ հաստատված «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների» ռազմավարության 19-րդ գլխում:

ԿՖԿՏՀ ներդրման նպատակով 2021թ., Ֆինանսների նախարարությունը, մրցութային կարգով ներգրավել է խորհրդատվական կազմակերպություն («Հարմոնիա» հիմնադրամ), որի հետ համատեղ աշխատանքի արդյունքում ուսումնասիրվել և գույքագրվել են ԿՖԿՏՀ 6 մոդուլների բիզնես գործընթացները, մասնավորապես՝ Բյուջետավորում, Գանձապետարան, Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում, Պետական գնումներ, Պետական պարտք և Ներքին աուդիտ:

Արդյունքում մշակվել է **ԿՖԿՏՀ նոր ամբողջական կոնցեպտ, օպտիմալացվել են բոլոր մոդուլների բիզնես գործընթացները**, դրանց միջև կապերը և տվյալների փոխանակումները: Այնուհետ՝ ԿՖԿՏՀ նոր կոնցեպտի հիման վրա մշակվել է ԿՖԿՏՀ ներդրման ծրագրային ապահովման ձեռքբերման Տեխնիկական առաջադրանքի նախագիծը:

2023թ. հունիսից ֆինանսների նախարարությունը իրականացրել է առաջիկա մրցույթի **պոտենցիալ հայտատուների շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն**՝ նպատակ ունենալով հասկանալ և հաշվի առնել առաջիկա մրցույթով գործնականում հետաքրքրված ՏՏ ընկերությունների քանակը, կարողությունների մակարդակը, փորձը և տրամադրվածությունը, ձգտելով հասնել մրցույթի հնարավոր մասնակիցների կողմից ԿՖԿՏՀ Տեխնիկական առաջադրանքի նախագծի հնարավորինս խոր ընկալմանը:

Նախագծի իրագործման և ներդրման կարևորագույն նպատակն է վերջնական օգտագործողի համար ստեղծել այնպիսի աշխատանքային գործիք, որը կհամապատասխանի պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարության պահանջներին և կնպաստի՝

- ռազմավարական և ամենօրյա որոշումների արդյունավետ կայացմանը,
- պատշաճ վերահսկողության ապահովմանը,
- հաշվետվողականության որակի բարձրացմանը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ակնկալվում է, որ **Նախագիծն իրականացվելու է 4 տարի ժամկետում** և իրենից ներկայացնելու է ԿՖԿՏՀ-ի նախագծման և ներդրման համար մրցույթի անցկացում և Մատակարարի ընտրություն, ինչից հետո Մատակարարի կողմից համակարգի ներդրում և գործարկում, ինչպես նաև ներկայում գործող համակարգերից դեպի ԿՖԿՏՀ անցման ապահովում: Անհրաժեշտ ծառայությունների նպատակն է ստեղծել անկախ նախագծային գրասենյակ, որը կղեկավարի ԿՖԿՏՀ ներդրման գործընթացը, և կապահովի Նախագծի նպատակների իրականացումը՝ համաձայն Տեխնիկական առաջադրանքի:

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Մատուցվելիք ծառայությունների շրջանակներում **նախատեսվում է անցկացնել մրցույթ և ընտրել Մատակարարի, այնուհետև՝ մատուցել նախագծերի կառավարման ծառայություններ**՝ մինչև Մատակարարի կողմից ԿՖԿՏՀ նախագծման և ներդրման աշխատանքների ավարտը:

Խորհրդատուից պահանջվելու է.

- Ուսումնասիրել առկա Տեղեկատվության հարցումը (RFI) և Առաջարկների հարցումը (RFP),
- Ուսումնասիրել առկա ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները և առկա փաստաթղթերը,
- Ներկայացնել ուսումնասիրված նյութի բարելավման առաջարկություններ,
- Աջակցել մրցութային փաթեթի պատրաստման, խմբագրման և ուսումնասիրման գործընթացում,
- Մրցույթի առաջին փուլի ժամանակ աջակցել նախնական մատակարարի/Մատակարարի ընտրության հարցում,
- Մրցույթի երկրորդ փուլի ժամանակ աջակցել վերջնական մատակարարի/Մատակարարի ընտրության հարցում,
- Ներկայացնել համանման նախագծերի իրականացման լավագույն միջազգային փորձը՝ ներառյալ Խորհրդատուի անմիջական մասնակցությամբ իրականացված նախագծերը,
- Տրամադրել նախագծերի կառավարման գրասենյակի ծառայություններ և ոլորտի բարձր որակավորման փորձագետներ՝ ապահովելու ԿՖԿՏՀ նախագծի իրագործումը:

Ընդհանուր առմամբ խորհրդատվական ծառայություններն իրենց մեջ պետք է ներառեն գործողությունների համապարփակ ամբողջություն, որը կաջակցի ՀՀ ֆինանսների նախարարությանը **ԿՖԿՏՀ արդյունավետ նախագծման, մշակման և ներդրման հարցում**:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Մատակարարին ընտրելուց հետո Խորհրդատուից պահանջվելու է ստանձնել ԿՖԿՏՀ նախագծման և ներդրման նախագծի կառավարչի պարտականությունները: Մասնավորապես՝ կազմակերպել համապարփակ միջոցառումներ՝ ԿՖԿՏՀ նախագծման և ներդրման գործընթացի պլանավորման, Մատակարարի կողմից հաշվետվողականության ապահովման և վերջինիս կատարած աշխատանքների պատշաճ վերահսկման նպատակով՝ համաձայն Տեխնիկական առաջադրանքի:

Մատուցվելիք ծառայությունները բխում են ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1716-Լ որոշմամբ հաստատված **Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից** և մատուցվում են Տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուից չի պահանջվելու ստուգել կամ վերանայել/փոփոխել Տեխնիկական առաջադրանքը:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Նախագծի իրականացման համար պատասխանատու մարմինները, դերերը և պարտականությունները

| | |
|---|---|
| Պատվիրատու | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Խորհրդատու | Նախագծի կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպություն |
| Մատակարար | ԿՖԿՏՀ նախագծման և ներդրման համար պատվիրատուի կողմից ընտրված SS կազմակերպություն |

Նախագիծը իրականացվելու **ՀՀ ֆինանսների նախարարության գլխավորությամբ**: **Խորհրդատուն** պատասխանատու է լինելու Մատակարարի ընտրության մրցութային գործընթացների համակարգման և Նախագծի կառավարման ծառայությունների մատուցման համար:
Նախագծի մասնակիցները՝ **ՀՀ ֆինանսների նախարարությունը և Խորհրդատուն ձևավորելու են Ղեկավար կոմիտե**՝ նախագծի ընթացիկ մոնիտորինգի և հաշվետվողականության ապահովման նպատակով:

Մատակարարների առաջարկների գնահատումն ու ընտրությունն իրականացվելու է **Գնահատման կոմիտեի** կողմից, որի կազմում կներառվեն

- **Պատվիրատուի Գնումների և Իրավաբանական գործառույթների** պատասխանատուներ և այլ ներքին շահառուներ՝ որպես հիմնական որոշում ընդունող պատասխանատուներ
- **Խորհրդատուն կիամակարգի կոմիտեի աշխատանքը**, կներկայացնի փաստաթղթերը և նախնական գնահատման արդյունքները, կտրամադրի իր կարծիքը ընտրված մատակարարի վերաբերյալ:

*(մանրամասների ներկայացված են «Մեթոդաբանություն» բաժնում՝ ստորև)*

**Գծապատկեր XX**




© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Նախագծի իրականացման վայրը

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ակնկալվում է, որ Նախագծի իրականացման ընթացքում Խորհրդատուն **իր գործունեությունը կծավալի Երևանում** և կներգրավի անհրաժեշտ մասնագետներ՝ ապահովելու համար Նախագծի մասնակիցների միջև հաղորդակցությունը և արդյունավետ համագործակցությունը ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության, այնպես էլ մյուս շահառուների հետ:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը պատրաստակամություն է հայտնել աշխատասենյակ հատկացնել ք. **Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեում** գտնվող իր վարչական շենքում, որտեղ կտեղակայվեն Նախագծի առանցքային մասնագետները:

## Նախագծի իրականացման վերաբերյալ մեր մոտեցումները և մեթոդաբանությունը

Նախագծի շրջանակներում նախատեսվող բոլոր գործողությունները պետք է ուղեկցվեն համապատասխան մոտեցումների և մեթոդաբանության կիրառմամբ, մասնավորապես՝

- Մասնագիտական համապատասխան հմտություններով օժտված, փորձառու և ոլորտին տիրապետող **փորձագետների և մասնագետների ներգրավում՝** Նախագծի իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով:
- Նախագծի **կատարողականի շարունակական ստուգում պարբերական մոնիտորինգի և գնահատման միջոցով, ընթացիկ համագործակցություն ՀՀ ֆինանսների նախարարության հետ և Նախագծի ընթացքի վերաբերյալ հաշվետվողականություն**: Մոնիտորինգի արդյունքները թույլ կտան ժամանակին արձանագրել անհրաժեշտ միջամտությունները, պահպանել Նախագծի ժամկետները և ապահովել ողջ շրջանակի կատարումը:
- **Լավագույն և փորձված մեթոդաբանության ներդրում Նախագծի իրականացման համար՝** տեղայնացնելով և կիրառելով հայաստանյան և միջազգային լավագույն փորձը: Ընտրված մեթոդաբանության և մոտեցումների համապատասխանեցում Նախագծով սահմանված և համաձայնեցված նպատակներին:
- Ծառայությունների **հիմնական մասի մատուցում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված գրասենյակում՝** ապահովելու համար սերտ համագործակցությունը և արդյունավետ հաղորդակցությունը Նախագծի մասնակիցների միջև:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Աշխատանքային թիմի կազմը

Առաջարկվող թիմը ղեկավարվելու է **Նախագծի ղեկավարի** կողմից և կներառի հիմնական անձնակազմ, որը ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 2-ում:

**Նախագծի ղեկավարը** ներգրավված կլինի՝ որպես Նախագծի և թիմի կառավարիչ՝ ապահովելով թիմի անդամների հասանելիությունը Նախագծի ընթացքում, ինչպես նաև կհանդիսանա Պատվիրատուի և Մատակարարի հետ աշխատանքի և հարաբերությունների հիմնական համակարգող:

Իրականացման ընթացքում՝ հիմնականում Առաջադրանք 5-ի մեկնարկից առաջ, կներգրավվեն **լրացուցիչ թիմային փորձագետներ և օժանդակ անձնակազմ**, ովքեր ամբողջությամբ ներգրավված կլինեն Առաջադրանք 5-ի աշխատանքներում և կաշխատեն Նախագծի իրականացման վայրում (տե՛ս նախորդ էջ «Նախագծի իրականացման վայրը»):

Առաջարկվող հիմնական թիմը ներառում է **կարճաժամկետ փորձագետներ և Նախագծի ղեկավարի տեղակալներ**, ովքեր ներգրավված կլինեն Նախագծի ընթացքում **մեթոդոլոգիական աջակցություն և համապատասխան մասնագիտական ուղղությունների աշխատանքների իրականացմում ապահովելու համար:** Նախատեսվում է ներգրավվածությունը սահմանել միջինում տարեկան 60 օր՝ մասնագիտական աջակցությունն ապահովելու նպատակով:

**Նախագծի հիմնական թիմ**

| Հիմնական անձնակազմ | Ընկերություն | Փորձագետ |
|---|---|---|
| 1. Նախագծի ղեկավար | KPMG Արմենիա | Զարուհի Ֆուրունջյան |
| 2. Նախագծի ավագ ղեկավարի տեղակալ | KPMG Ֆիլիպիններ | Մարիսա Բենիտես |
| 3. Նախագծի ղեկավարի տեղակալ | KPMG Ղազախստան | Գուլմիրա Խուսայնովա |
| 4. SS ճարտարապետ | KPMG Ղազախստան | Վյաչեսլավ Վոլգին |
| 5. SS անվտանգության մասնագետ | KPMG Ղազախստան | Դամիր Երկին |
| 6. Պետական/համայնքային բյուջեի պլանավորման գծով մասնագետ | KPMG Հնդկաստան | Ռոհիտ Նաիդու |
| 7. Պետական/համայնքային բյուջեի կատարման գծով մասնագետ | Անկախ փորձագետ | Արմեն Եղիազարյան |
| 8. Հանրային հատվածի հաշվապահության մասնագետ | Անկախ փորձագետ | Մարիա Կոշկինա |

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջարկություններ աշխատանքների շրջանակի վերաբերյալ

Հաշվի առնելով համանման Նախագծերում աջակցություն ցուցաբերելու մեր ընկերության փորձը՝ առաջարկում ենք հետևյալ փոփոխությունները ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների» մատուցման Հայտում.

**Առաջադրանքներ և արդյունքներ**

***Առաջադրանք 3 - ՖՆ և նախարարակավորման փուլի արդյունքում ընտրված մատակարարների հետ համագործակցություն՝ ուղղված ծրագրային փաստաթղթերի և մրցույթի պահանջների հստակեցման***

Առաջարկում ենք սույն Առաջադրանքն իրականացնել երկու փուլով, որտեղ Խարհրդատուն որպես առաջին ենթափուլ (3.1) նաև կմասնակցի Մատակարարների նախարարակավորմանը: Աշխատանքների իրականացման մեր մեթոդաբանությունը ստորև ներկայացված է՝ հաշվի առնելով վերը նշված առաջարկը:

***Առաջադրանք 4: Աջակցություն մրցույթի հետագա փուլերում մատակարարների ընտրության հարցում***

Քանի որ մեր պատկերացմամբ, Խորհրդատուի դերը հիմնականում կայանում է Նախագծի համակարգման և աջակցություն ցուցաբերելու մեջ, առաջարկում ենք զերծ մնալ «երաշխավորել» բառի օգտագործումից, քանի որ Խորհրդատուն կարող է ներկայացնել իր վերլուծությունը և կարծիքը, սակայն երաշխավոր հանդես գալ չի կարող: Աշխատանքների իրականացման մեր մեթոդաբանությունը ստորև ներկայացված է՝ հաշվի առնելով վերը նշված առաջարկը:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

# Մեթոդաբանություն

# Առաջադրանք 1: Առկա փաստաթղթերի վերանայում

## Տեխնիկական առաջադրանքի  պահանջ

- **Նպատակ:** Գնահատել ԿՖԿՏՅ ծրագրին առնչվող փաստաթղթերի ընթացիկ վիճակը և բացահայտել բացերը, սխալները և բարելավման ենթակա ոլորտները:
- **Գործողություններ:**
    - Հավաքել և ամփոփել բոլոր համապատասխան փաստաթղթերը, ներառյալ նախաորակավորման հայտարարությունը (RFI) Տեխնիկական առաջադրանքը (RFP), ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները և առնչվող բոլոր այլ փաստաթղթերը
    - Հարցազրույցներ անցկացնել հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ նախագծի համատեքստը հասկանալու և լրացուցիչ պատկերացումներ կազմելու համար:
    - Պատրաստել համապարփակ հաշվետվություն՝ մանրամասնելով արդյունքները, ներառյալ հայտնաբերված բացերը, անհամապատասխանությունները և բարելավման կարիք ունեցող դրույթները
    - Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախապատրաստել փաստաթղթում կատարված բարելավումների առաջնահերթ ցանկը:
    - Մշակել Նախաորակավորման պայմանների և Տեխնիկական առաջադրանքի և այլ համապատասխան փաստաթղթերի թարմացված տարբերակները՝ ներառելով առաջարկվող փոփոխությունները:
    - Համոզվել, որ բոլոր փաստաթղթերը համապատասխանում են համապատասխան չափանիշներին և լավագույն պրակտիկային:
    - Վարել աշխատանքային հանդիպումներ կամ հանդիպումներ շահագրգիռ կողմերի հետ՝ առաջարկվող բարելավումները հիմնավորելու և կատարելագործելու նպատակով:

## Իրագործում

***Ա) Վերլուծել Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ամբողջականությունը և ճշտությունը***

- Համաձայնեցնել Նախագծին առնչվող ներքին կանոնակարգերի և ակտերի ցանկը, հավաքագրել և ուսումնասիրել դրանք:
- Տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրմանը զուգահեռ հանդիպել և հարցազրույցներ անցկացնել Նախագծի շահառուների հետ, ինչը թույլ կտա ուսումնասիրվող փաստաթղթերի վերաբերյալ հստակ և ճիշտ պատկերացումներ կազմել՝ միևնույն ժամանակ հասկանալով Նախագծի շահառուների տեսլականը և ակնկալիքները:
- Իրականացնել RFI և RFP փաստաթղթերի և համաձայնեցված ցանկում ներառված փաստաթղթերի մանրամասն վերլուծություն՝ միջազգային լավագույն փորձի համատեքստում:
- Իրականացնել ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ փաստաթղթերի ուսումնասիրություն SS ճարտարապետության և ընթացակարգային տեսանկյունից: *Խորհրդատուի կողմից ԿՖԿՏՅ տեխնիկական պարամետրերի և տեխնիկական նկարագրերի ամբողջականության և ճշտության ստուգում չի իրականացվելու:*
- Քննարկել վերլուծության արդյունքները Նախագծի Ղեկավար կոմիտեի հետ:

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 1: Առկա փաստաթղթերի վերանայում (շարունակություն)

***Բ) Բացահայտել անհամապատասխանությունները, կրկնությունները և ոչ արդիական տեղեկատվությունը***

- Նախորդ ենթափուլում իրականացված վերլուծության հիման վրա բացահայտել փաստաթղթերի՝ միմյանց հետ անհամապատասխանությունները, կրկնությունները և գնահատել դրանց արդիականությունը՝ ելնելով ԿՖԿՏՅ նպատակներից և հաշվի առնելով համանման նախագծերի իրականացման մեր փորձը:
- Քննարկել բացահայտումները Նախագծի Ղեկավար կոմիտեի հետ:

***Գ) Վերհանել համապատասխան չափանիշներին, ստանդարտներին և լավագույն փորձին անհամապատասխանությունը:***

- Վերլուծել և վերհանել RFI և RFP փաստաթղթերի համապատասխանությունը միջազգայնորեն ընդունված չափանիշներին և ստանդարտներին, ներառյալ՝

**RFI**

- նկարագրվող համակարգի արդիականությունը և ամբողջականությունը
- Մատակարարներին առաջադրվող պահանջների սահմանման հստակությունը
- պահանջվող տեղեկատվության համապատասխանությունը Նախագծին
- պահանջվող տեղեկատվության մանրամասնության աստիճանը
- փաստաթղթի և տեղեկատվության ներկայացման ֆորմատը
- ակնկալվող պատասխանների ժամկետների խելամտությունը
- և այլն

**RFP**

- Նախագծի պահանջների նկարագրությունը և դրա մանրամասնության աստիճանը
- Մանրամասն տեխնիկական առաջադրանքի առկայությունը և կապը Նախագծի հիմնական նպատակներին
- Մատակարարներին առաջադրվող պահանջների մանրամասնության աստիճանը
- Առաջարկների պատրաստման ուղեցույցի սահմանման հստակությունը
- Առաջարկների գնահատման սահմանման հստակությունը
- և այլն

- **ԿՖԿՏՅ հարթակի ճարտարապետության տեսանկյունից կիրականացվի RFI և RFP փաստաթղթերի հետևյալ վերլուծությունը**
  - ԿՖԿՏՅ հարթակի յուրաքանչյուր մոդուլի նպատակների և պահանջների վերլուծություն
  - Մոդուլների ֆունկցիոնալության նկարագրության ամբողջականության և ամբողջականության վերլուծություն
  - Գործառնությային պահանջների համապատասխանության գնահատում նախարարության կարիքներին
  - Նախարարության ներկայիս ենթակառուցվածքների հետ տեխնոլոգիաների համապատասխանության դիտարկում

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 1: Առկա փաստաթղթերի վերանայում (շարունակություն)

- Անվտանգության և մասշտաբայնության պահանջների վերլուծություն
- Ճարտարապետական մոտեցման ուսումնասիրություն
- Մոդուլների՝ միմյանց և արտաքին համակարգերի հետ փոխգործակցության նկարագրության առկայության և ճշգրտության ստուգում
- Նախարարության գործող տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրման սխեմաների գնահատում

Ի լրումն՝

- Ընտրել և համաձայնեցնել Ղեկավար կոմիտեի հետ մինչև 4 (չորս) համադրելի երկրներում իրականացված նմանատիպ Նախագծեր (օրինակ՝ Մերձբալթյան երկրներ, Ղազախստան)՝ որպես լավագույն փորձ: Երկրների ցանկը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ Նախագծի մեկնարկի ժամանակ:

- Իրականացնել նմանատիպ նախագծերի համար կազմված նախնական փաստաթղթերի բովանդակային և կառուցվածքային վերլուծություն:

- Վերլուծել բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունների ներառումը Նախագծի փաստաթղթերում:

- Քննարկել վերլուծության արդյունքները Ղեկավար կոմիտեի հետ:

Այս ենթափուլում նաև կուսումնասիրվեն Նախագծին առնչվող ներքին կանոնակարգային փաստաթղթերը և կվերլուծվի դրանց համապատասխանությունը միջազգային ստանդարտներին և RFI և RFP փաստաթղթերում վերը նշված բացահայտված հավանական փոփոխությունների արտացոլման նպատակահարմարությունը:

***Դ) Բացահայտել փոփոխությունների առաջնահերթ ցանկ՝ հայտնաբերված անհամապատասխանություններն ու սխալները վերացնելու համար***

- Իրականացված վերլուծությունների հիման վրա կազմել փոփոխությունների ցանկ և սահմանել առաջնահերթություններ՝ ելնելով դրանց իրագործելիությունից և ժամկետների նպատակահարմարությունից: Հարկավոր կլինի հաշվի առնել նաև փաստաթղթերի օգտագործելության բարելավմանն ուղղված փոփոխությունները:
- Համաձայնեցնել ցանկը Նախագծի Ղեկավար կոմիտեի հետ:

***Ե) Մշակել համապարփակ զեկույց***

- Ա – Դ ենթափուլերում իրականացված աշխատանքները և դրանց արդյունքները կամփոփվեն համապարփակ զեկույցում, որը կներառի հետևյալը՝
  - Անցկացված հարցազրույցների մասնակիցների ցանկը,
  - Իրականացված վերլուծությունների արդյունքները,
  - Հիմնական բացահայտումները՝ ներառյալ աշխատանքային հանդիպումների և հարցազրույցների ժամանակ Նախագծի շահառուների կողմից հնչած կարծիքները և արձագանքները,

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 1: Առկա փաստաթղթերի վերանայում (շարունակություն)

- Առաջարկվող փոփոխությունները և բարելավումները,
- Փոփոխությունների իրականացման ժամանակացույցը և պատասխանատուները, որոնք պետք է սահմանվեն Ղեկավար կոմիտեի կողմից՝ կիրառելով RACI մեթոդաբանությունը,
- Նախագծին առնչվող ներքին կանոնակարգերի վերանայման և պարբերական թարմացումների մոտեցումը՝ հաշվի առնելով անհրաժեշտությունները և պահանջվող ռեսուրսների առկայությունը,
- Առկա փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական կարծիք՝ միջազգային լավագույն փորձին համապատասխանության և համադրելիության տեսանկյունից:

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 2: Աջակցություն նախաորակավորման փուլի փաստաթղթերի պատրաստմանը

### Տեխնիկական առաջադրանքի պահանջ

- **Նպատակ:** Ապահովել ԿՖԿՏՅ նախաորակավորման փուլի ամբողջական, հստակ փաստաթղթերի պատրաստումը
- **Գործողություններ:**
  - Մշակել մրցույթի մանրամասն պահանջներ՝ ապահովելով համապատասխանեցում Նախագծի նպատակներին և լավագույն փորձին:
  - Մշակել մատակարարների առաջարկների գնահատման չափանիշներ և ուղեցույցներ:
  - Համագործակցել իրավաբանական և գնումների թիմերի հետ՝ ապահովելու համար անհրաժեշտ բոլոր իրավական և կանոնակարգային պահանջները:

### Իրագործում

***Ա) Վերանայել և կատարելագործել աշխատանքի շրջանակը և արդյունքները***

- Հիմնվելով Առաջադրանք 1–ի իրագործման Գ կետով սահմանված RFI և RFP փաստաթղթի համար վերհանված բացահայտումների վրա՝ իրականացնել աշխատանքների շրջանակի և արդյունքների վերանայում և կատարելագործում: Դրանք կվերանայվեն միայն մրցույթի համար տեղեկատվության ամբողջականության տեսանկյունից, ինչպես նաև պահանջվող ԿՖԿՏՅ ճարտարապետության տեսանկյունից: *Այլ տեխնիկական պարամետրեր, ներառյալ՝ համակարգի կառուցվածքը, մոդուլների կառուցվածքը և դրանց համար նախատեսված տեխնիկական պահանջները, չեն ներառվում մեր աշխատանքի շրջանակի մեջ*:
- Քննարկել վերլուծության փոփոխությունները Նախագծի Ղեկավար կոմիտեի հետ:

***Բ) Մշակել նախաորակավորման փուլի մանրամասն պայմաններ և պահանջներ, ներառյալ ուղեցույցների և ձևանմուշների պատրաստումը***

- Նախաորակավորման փաթեթը պետք է կազմված լինի՝ հիմնվելով Առաջադրանք 1-ի աշխատանքների ընթացքում վերանայված RFI փաստաթղթի, գործող իրավական ակտերի և կանոնակարգերի, ինչպես նաև միջազգային առաջատար փորձի վրա: Մասնավորապես՝ պայմանների և պահանջների փաթեթը պետք է ներառի հետևյալը,

  **ՄԱՍ 1 – Նախաորակման ընթացակարգ**

  - **Հրահանգներ հայտատուներին** - Այս բաժինը տրամադրում է տեղեկատվություն, որն օգնում է հայտատուներին պատրաստել իրենց հայտերը: Տեղեկատվություն է տրվում նաև ներկայացման, փաթեթների բացման և գնահատման վերաբերյալ:
  - **Հայտի տվյալների թերթիկ -** Այս բաժինը ներառում է դրույթներ, որոնք հատուկ են յուրաքանչյուր գնմանը, և որոնք փոփոխում, ճշգրտում կամ լրացնում են Հրահանգներ հայտատուներին բաժինը:
  - **Գնահատման չափանիշներ -** Այս բաժինը պետք է սահմանի գնահատման և որակավորման համար հիմք հանդիսացող հիմնական չափանիշները՝ քանակական և որակական
  - **Հայտերին կից պարտադիր տեղեկատվության ցանկ** – ներառյալ՝ իրավական փաստաթղթեր, հայտատուի փորձը հաստատող փաստաթղթեր, հավաստագրեր և այլն
  - **Իրավասու երկրներ** - Այս բաժինը ներառում է տեղեկատվություն մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելու համար իրավասու երկրների ցանկը:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 2: Աջակցություն նախաորակավորման փուլի փաստաթղթերի պատրաստմանը (շարունակություն)

- Պատվիրատուի ակնկալիքներին համապատասխանությունը ապահովելու նպատակով նախաորակավորման փաթեթը պետք է մշակվի Պատվիրատուի գնումների թիմի և իրավաբանական թիմի մասնագետների հետ սերտ համագործակցության արդյունքում և հաստատվելուց առաջ համաձայնեցվի վերջիններիս հետ:

***Գ) Մշակել մրցույթի մանրամասն տեխնիկական պայմաններ և պահանջներ, ներառյալ ուղեցույցները և ձևանմուշների պատրաստումը***

- Մրցութային փուլի պահանջները և պայմանները պետք է կազմված լինեն՝ հիմնվելով RFP փաստաթղթի, գործող իրավական ակտերի և կանոնակարգերի, ինչպես նաև միջազգային առաջատար փորձի վրա: Մասնավորապես՝ տեխնիկական պայմանների և պահանջների փաթեթը պետք է ներառի հետևյալը.

**ՄԱՍ 1 – Մրցույթի ընթացակարգ**

- **Հրահանգներ հայտատուներին** - Այս բաժինը տրամադրում է տեղեկատվություն, որն օգնում է Մասնակիցներին պատրաստել իրենց հայտերը: Տեղեկատվություն է տրվում նաև ներկայացման, մրցութային փաթեթների բացման և գնահատման վերաբերյալ, և պայմանագրերի շնորհման վերաբերյալ:
- **Մրցույթի տվյալների թերթիկ -** Այս բաժինը ներառում է դրույթներ, որոնք հատուկ են յուրաքանչյուր գնմանը, և որոնք փոփոխում, ճշգրտում կամ լրացնում են Հրահանգներ մասնակիցներին բաժինը:
- **Գնահատման և որակավորման չափանիշներ -** Այս բաժինը պետք է սահմանի հետևյալը.
  - այն չափանիշները, որոնք պետք է օգտագործվեն առաջարկի փաթեթների նվազագույն գնահատականը որոշելու համար,
  - մրցույթի պայմանագրի պահանջների բավարարման համար նվազագույն պայմանները,
  - մրցույթի գնահատման չափանիշները և դրանց կիրառման մեթոդները: Սա ներառում է տեխնիկական և ֆինանսական չափանիշների գնահատումը:
- **Մրցույթի փաստաթղթերի ձևանմուշներ -** Այս բաժինը ներառում է այն ձևանմուշները, որոնք պետք է լրացվեն հայտատուի կողմից և ներկայացվեն որպես մրցույթի փաթեթի մաս:

**ՄԱՍ 2 – Պահանջներ**

- **Տեխնիկական նկարագրեր, Գծագրեր և Լրացուցիչ տեղեկատվություն**, որոնք պետք է մանրամասն նկարագրեն գնման ենթակա ԿՖԿՏՀ համակարգը: Պահանջները հիմնված կլինեն RFP փաստաթղթի վրա:

**ՄԱՍ 3 – Պայմանագրի պայմանները և պայմանագրի ձևը**

- **Պայմանագրի ընդհանուր պայմաններ** – Ներառում է Պատվիրատուի կողմից պահանջվող և ընդունված պայմանագրային ընդհանուր պայմանները, որոնք պետք է ընդունվեն հայտատուի կողմից:
- **Պայմանագրի ձևանմուշը** - Այս բաժինը պետք է ներառի ձևեր, որոնք կկազմեն պայմանագրի մաս: Կարևոր են Նախագծի իրականացման անվտանգության և կանխավճարի ապահովման ձևերը, եթե կիրառելի է, որոնք կլրացվեն միայն հաղթող մասնակցի կողմից՝ պայմանագրի շնորհումից հետո:

- *Պատվիրատուի ակնկալիքներին համապատասխանությունը ապահովելու նպատակով՝ մրցույթի տեխնիկական պայմանները և պահանջները, ուղեցույցները և ձևանմուշները, ինչպես նաև տեխնիկական նկարագրերը և պայմանագրերի ձևանմուշները պետք է մշակվեն Պատվիրատուի գնումների թիմի և իրավաբանական թիմի մասնագետների հետ սերտ համագործակցության արդյունքում և հաստատվելուց առաջ համաձայնեցվի վերջիններիս հետ:*

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 3.1 ՖՆ և նախաորակավորման փուլի արդյունքում ընտրված մատակարարների հետ համագործակցություն՝ ուղղված ծրագրային փաստաթղթերի և մրցույթի պահանջների հստակեցման

### 3.1: Նախաորակավորման փուլի անցկացումը

- **Նպատակ: Աջակցել ՖՆ-ին նախաորակավորման փուլի անցկացման հարցում՝ ապահովելով մասնակիցների գնահատումը և նախաորակավորման փուլում ընտրված մասնակիցների ցուցակի կազմումը**
- **Գործողություններ:**
  - Աջակցել ՖՆ-ին անցկացնել անցկացնել նախաորակավորման փուլը՝ համաձայն RFI-ի
  - Սահմանել մասնակիցների գնահատման ընթացակարգեր և գնահատել մասնակիցներին, ինչի արդյունքում կընտրվեն նախաորակավորման փուլը հաղթահարած մասնակիցները

**Իրագործում**

**Ա) Աջակցել նախաորակման փուլի համապարփակ գնահատմանը (RFI)**

Նախաորակման փուլի պատասխանների գնահատումը բազմափուլ գործընթաց է և հիմնվում է հաստատված և հայտարարված RFI վրա: Հարկավոր է սկսել նախնական արագ գնահատումից, այնուհետև անցնել ներկայացված հայտերի առավել մանրամասն վերլուծությանը և գնահատմանը: Արագ գնահատման ընթացքում, հիմնական հարցերը, որը հաշվի կառնվեն, ներառում են.

- Արդյո՞ք հայտը ստացվել է ժամանակին
- Արդյո՞ք հայտը ներկայացված է ճիշտ ձևաչափով: Օրինակ՝ էլ. փոստ՝ word կամ pdf ֆայլի կցմամբ, որը չի պահանջվել
- Արդյոք ներկայացված փաստաթղթերը ներառում են պահանջվող առավելագույն թվից ավելի էջեր
- Արդյո՞ք նշված է ճիշտ RFI տեղեկանքի համարը
- Արդյո՞ք վաճառողի կոնտակտային տվյալները ներառված են, օրինակ՝ անվանական կոնտակտ, հեռախոս և էլ.փոստի հասցեն
- Արդյո՞ք վաճառողը պահանջվածից ավելի շատ տեղեկատվություն է ուղարկել, օրինակ՝ օժանդակ փաստաթղթեր, վաճառքի բրոշյուրներ:

Արագ գնահատման արդյունքում, հնարավոր է կազմել այն հայտատուների ցանկը, որոնք կարող են գնահատվել առավել մանրամասն: Ընտրված ցանկը կհամաձայնեցվի Ղեկավար կոմիտեի հետ:

Մանրամասն գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալը.

- Հայտի ամբողջականությունը – պահանջվող բոլոր հարցերի պատասխանները ինչպես նաև տեղեկատվությունը ներառված են:
- Որակ – տրված են կշռադատված, մանրամասն և իրատեսական պատասխաններ:
- Պարզություն – պահանջվող տեղեկատվությունը հստակ գրված է, առանց ավելորդ մարքեթինգային տեղեկատվության:
- Ցանկություն - Նշում կա այն մասին, թե որքանով է հայտատուն ցանկանում աշխատել Նախագծի շրջանակներում, օրինակ՝ բավարարվել են ժամանակային սանդղակները, առաջարկվել է լրացուցիչ օգնություն և այլն:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## 3.1: Նախաորակավորման փուլի անցկացումը (շարունակություն)

Գնահատման չափանիշները պետք է ներառեն նաև պահանջվող համակարգի տեխնիկական համապատասխանության վերաբերյալ հստակ տեղեկատվություն: Խորհրդատուն տեխնիկական պահանջների բավարարման տեսանկյունից պատասխանատու կլինի միայն առաջարկվող համակարգի ճարտարապետության գնահատման համար: Գնահատման արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով, օրինակ՝

Օրինակ

| Գնահատման արդյունքներ | Հայտատու N1 | Հայտատու N2 | Հայտատու N3 |
|---|---|---|---|
| **Բյուջետավորման մոդուլ** | | | |
| Ներկայացված են Բյուջեի ծախսերի և եկերի ենթամոդուլի վերաբերյալ հիմնական տվյալները | Այո | Ոչ | Այո |
| Ներկայացված են Եկամուտների մոդուլի վերաբերյալ հիմնական  տվյալներ | Այո | Այո | Ոչ |

Գնահատման արդյունքում կպատրաստվի գնահատման արդյունքների զեկույց, որը կներառի:

- **Կատարված աշխատանքների ամփոփումը**
- **RFI-ի պատասխանների համեմատական աղյուսակը**
- **Յուրաքանչյուր RFI պատասխանի ամփոփումը**, որը ներառում է մանրամասներ պոտենցիալ ծրագրային լուծումների մասին, օրինակ՝ պահանջները համապատասխանում են (կամ ոչ), տեխնոլոգիան, ուրվագծերը, հայտատուի նախկին հաճախորդները և այլն
- **Ընտրված հայտատուների ցանկը – կարճ ցուցակը**

Գնահատման զեկույցը պետք է հաստատվի Պատվիրատուի կողմից, որից հետո հայտատուները տեղեկացվում են գնահատման արդյունքների մասին: Կարևոր կլինի արդյունքների վերաբերյալ տեղեկացնել և՛ ընտրված, և՛ չընտրված հայտատուներին:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## 3.2: ՖՆ և նախաորակավորման փուլի արդյունքում ընտրված մատակարարների հետ համագործակցություն՝ ուղղված ծրագրային փաստաթղթերի և մրցույթի պահանջների հստակեցմանը

**Տեխնիկական առաջադրանքի պահանջ**

- **Նպատակ.** Մասնակցել գնման առարկայի հստակեցմանը, վերանայել տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջները՝ ապահովելով մրցույթի համապարփակ պահանջների վերջնականացում.

- **Գործողություններ.**
    - Մասնակցել նախաորակավորվածների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներին՝ նախագծի բոլոր պահանջները հստակեցնելու համար
    - Համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ Պատվիրատուի և պոտենցիալ մատակարարների հետ, կարծիքների հավաքագրման և մրցույթի պահանջների նկատմամբ ակնկալիքների հստակեցման համար
    - Գնման առարկային վերաբերող ցանկացած խնդրի քննարկման և լուծման համար բոլոր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և սեմինարների կազմակերպում/աջակցություն
    - Տեխնիկական յուրահատկությունները կատարելագործելու նպատակով համագործակցել տեխնիկական մասնագետների հետ՝ ապահովելու դրանց հստակությունը, համապարփակությունը և ոլորտի ստանդարտներին համապատասխանեցումը:
    - Համոզվել, որ բոլոր տեխնիկական պահանջները հստակ սահմանված են և չափելի՝ պարզեցնելով դրանց գնահատումը հայտերի ներկայացման փուլում:
    - Ֆունկցիոնալ մասնագետների հետ համագործակցություն՝ ֆունկցիոնալ ապահանջները հստակեցնելու համար՝ ապահովելով, որ դրանք ճշգրտորեն արտացոլեն ցանկալի արդյունքները և օգտագործողի կարիքները:
    - Հիմնավորել ֆունկցիոնալ պահանջները Նախագծի նպատակների և շահագրգիռ կողմերի ակնկալիքների հետ ՝ ապահովելու համար, որ դրանք իրատեսական են և հասանելի:
    - Համոզվել, որ մրցույթի վերջնական պահանջները համապարփակ են և ներառում են գնման առարկայի բոլոր դրույթները և պատրաստ են ներառվելու մրցութային վերջնական փաթեթի մեջ:

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## 3.2: ՖՆ և նախաորակավորման փուլի արդյունքում ընտրված մատակարարների հետ համագործակցություն՝ ուղղված ծրագրային փաստաթղթերի և մրցույթի պահանջների հստակեցմանը (շարունակություն)

**Իրագործում**

***Ա) Ապահովել հաղորդակցություն և աջակցության տրամադրում նախաորակավորված մասնակիցներին***

- Նախատեսել պարբերական հանդիպումների անցկացում նախաորակավորված մասնակիցների և նախագծի շահառուների միջև՝ շաբաթական կտրվածքով, ինչպես նաև արտահերթ՝ անհետաձգելի անհրաժեշտության առաջացման դեպքում:
- Առանձնացնել արագ արձագանքման խումբ, որում ներգրավված կլինեն Խորհրդատուի տեխնիկական թիմի ներկայացուցիչներ: Այս խմբի նպատակն է արձագանքել մասնակիցների կողմից բարձրաձայնված հարցերին, հավաքագրել մրցութային փաստաթղթերի և տեխնիկական պահանջների վերաբերյալ մասնակիցների և այլ շահառուների կողմից վերհանված խնդիրները և տրամադրել համապատասխան հստակեցումներ:

***Բ) Ընթացիկ ուսումնասիրության ենթարկել գնման առարկային վերաբերող փաստաթղթերը***

- Կազմակերպել պարբերական հանդիպումներ նախաորակավորված մասնակիցների, նախագծի շահառուների, տեխնիկական և ֆունկցիոնալ թիմի ներկայացուցիչների միջև
- Համակարգել հանդիպումները և արձանագրել բարձրաձայնված խնդիրները, Պատվիրատուի և նախագծի շահառուների սպասումները, նախաորակավորված մասնակիցների մտավախությունները՝ կապված Նախագծի արդյունավետ իրականացման հետ:
- Համագործակցել տեխնիկական և ֆունկցիոնալ մասնագետների հետ և գնահատել սահմանված պահանջների չափելիությունը և իրագործելկլությունը՝ ներգրավելով նաև Խորհրդատուի աշխատանքային թիմի SS ճարտատապետին և տեղեկատվական անվտանգության մասնագետին:

***Գ) Վերջնականացնել մրցութային փաստաթղթերը***

- Հիմնվելով նախորդ գործողությունների արդյունքների վրա՝ պատրաստել մրցութային փաստաթղթերի վերջնական տարբերակը՝ համագործակցելով Նախագծի շահառուների հետ:
- Հիմնավորել գնման առարկայի ֆունկցիոնալ պահանջները՝ ճարտարապետության և ընթացակարգերի առկայության և համապատասխանության տեսանկյունից՝ հաշվի առնելով ինչպես նախաորակավորված մասնակիցների մտավախությունները, այնպես էլ Նախագծի շահառուների կողմից բարձրացված ակնկալիքները:
- Մշակել մրցույթի վերջնական պահանջների վերաբերյալ մասնագիտական կարծիք՝ ամբողջականության, իրագործելության և միջազգային լավագույն փորձին համապատասխանության տեսանկյունից և ներկայացնել Ղեկավար կոմիտեին՝ հաստատման:

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## 3.2: ՖՆ և նախաորակավորման փուլի արդյունքում ընտրված մատակարարների հետ համագործակցություն՝ ուղղված ծրագրային փաստաթղթերի և մրցույթի պահանջների հստակեցմանը (շարունակություն)

***Դ) Ապահովել Առաջադրանքի շրջանակներում կատարված աշխատանքների և վերջնարդյունքների արձանագրումը և առաջարկությունների տրամադրումը***

- Պատրաստել ամփոփ հաշվետվություն, որն իր մեջ կպարունակի նախաորակավորված մասնակիցների, Նախագծի շահառուների, ինչպես նաև տեխնիկական և ֆունկցիոնալ մասնագետների կողմից բարձրաձայնած առաջարկությունները, մտավախությունները և ակնկալիքները, ինչպես նաև Խորհրդատուի կողմից ձեռնարկված համարժեք քայլերի նկարագրությունը՝ ուղղված մրցութային փաթեթում շահառուների ակնկալիքների արտացոլմանը:
- Պատրաստել տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջների գնահատման վերաբերյալ հաշվետվություն, որը պահանջները կհամեմատվեն միջազգային լավագույն փորձի և Խորհրդատուի կողմից նախկինում իրականացված նախագծերի ժամանակ կիրառված մոտեցումների հետ և կտրամադրվեն համապատասխան առաջարկություններ՝ բարելավման ուղղությամբ:
- Իրականացնել մրցութային փաթեթի՝ որպես ամբողջության, վերջնական վերլուծություն միջազգային լավագույն փորձի և Խորհրդատուի կողմից նախկինում իրականացված նախագծերի ժամանակ կիրառված մոտեցումների տեսանկյունից, տրամադրել համապատասխան առաջարկություններ՝ միևնույն ժամանակ վարելով մրցութային փաթեթի մշակման բոլոր փուլերի ընթացքում բարձրաձայնված կարծիքների և առաջարկությունների վերաբերյալ ամփոփաթերթ: Վերլուծության արդյունքները, առաջարկությունները և ամփոփաթերթը ներառել համապատասխան զեկույցի մեջ և ներկայացնել Պատվիրատուին:

KPMG

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 4. Աջակցություն մրցույթի հետագա փուլերում մատակարարների ընտրության հարցում

### Տեխնիկական առաջադրանքի  պահանջ

- **Նպատակ: Աջակցել ՖՆ-ին ԿՖԿՏՅ ծրագրի համար լավագույն մատակարարներին գնահատելու և ընտրելու հարցում:**
- **Գործողություններ:**
  - Սահմանել մատակարարների առաջարկների գնահատման հստակ և օբյեկտիվ չափանիշներ:
  - Մշակել համապարփակ գնահատման մատրից, որը կօգտագործվի գնահատման գործընթացում:
  - Մասնակցել հայտագրված առաջարկությունների գնահատմանը և ամփոփմանը՝ տրամադրելով փորձագիտական կարծիքներ և առաջարկություններ:
  - Աջակցել պոտենցիալ մատակարարների հետ կազմակերպվող քննարկումների ու հանդիպումների՝ նրանց կողմից ներկայացված առաջարկները հստակեցնելու և ցանկացած խնդիր լուծելու համար:
  - Մասնակցել վերահսկողական այցերին և պատրաստել հարցերի համապարփակ ցանկ՝ տրված լուծման ամբողջական ըմբռնումն ապահովելու համար:
  - Տրամադրել հայտի, պայմանագրի և որակավորման ապահովումներ կիրառելու կամ չկիրառելու, կիրառելու դեպքում՝ դրանց չափերի և տեսակների, կանխավճարի, դրա չափի և մարման կարգի վերաբերյալ պայմանները:
  - Աջակցություն ցուցաբերել ընտրության վերջնական գործընթացում՝ կազմելով ամփսփ հիմնավորում ընտրված մասնակցի համապատասխանության և ցանկալի արդյունքներին հասնելու կարողության վերաբերյալ:

### Իրագործում

***Ա)  Աջակցել առաջարկների համապարփակ գնահատմանը (RFP)***

Համաձայնեցված RFP փաստաթուղթը ուղարկվում է կարճ ցուցակում ներառված հայտատուներին, ովքեր պետք է ներկայացնեն առաջարկները՝ սահմանված ժամկետում:

Գնահատման չափանիշները պետք է հիմնված լինեն RFP փաստաթղթում ներառված պահանջների և դրված չափանիշների վրա: Գնահատման համար հարկավոր կլինի կազմավորել **Գնահատման հանձնաժողով**:

KPMG © 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 4. Աջակցություն մրցույթի հետագա փուլերում մատակարարների ընտրության հարցում (շարունակություն)

Գնահատումը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնարար գործոնների վրա.

- **Տեխնիկական փորձաքննություն** - առաջարկող ընկերության կարողությունն է՝ կատարել RFP-ով պահանջվող առաջադրանքները, ներառյալ փորձը, որակավորումը և գիտելիքները
- **Ծախսեր** - առաջարկվող բյուջեն/գինը, ներառյալ՝ ցանկացած համապատասխան ծախսեր, ինչպիսիք են աշխատուժը, նյութերը և սարքավորումները և դրա համապատասխանությունը Նախագծի համար հաստատված բյուջեին
- **Մոտեցում և մեթոդաբանություն -** առաջարկվող մոտեցումն ու մեթոդաբանությունը ավարտելու RFP-ում ուրվագծված աշխատանքները՝ ներառյալ ժամանակացույցը, աշխատանքի բաշխման կառուցվածքները և ընդհանուր Նախագծի կառավարումը
- **Ընկերություն որակավորումը** - հայտատուի փորձը, հեղինակությունը և ֆինանսական կայունությունը: Հարկավոր կլինի նաև ստուգել հեղինակության հետ կապված բացասական ակնարկների առկայությունը (բաց աղբյուրներից)
- **Համապատասխանություն** - որքանով է առաջարկը համապատասխանում RFP-ում նշված բոլոր պահանջներին և առանձնահատկություններին
- **Նորարարություն –** արդյոք առաջարկը ներառում է եզակի և նորարարական լուծումներ, որոնք վերաբերում են Պատվիրատուի կարիքներին և նպատակների
- **Ընդհանուր համապատասխանություն** - առաջարկի ընդհանուր համապատասխանությունը պահանջներին և նպատակներին, ներառյալ՝ նախագիծը ժամանակին, բյուջեի սահմաններում և որակի պահանջվող չափանիշների համաձայն իրականացնելու կարողությունը:

Գնահատման գործընթացը և քայլերը ներառում են.

1. **Բոլոր առաջարկների վերլուծություն** ըստ դրված չափանիշների
2. **Համապատասխանության գնահատում -** նախնական որոշման կայացում յուրաքանչյուր առաջարկի «համապատասխանության» և «անհամապատասխանության» վերաբերյալ: «Համապատասխանող» առաջարկները պետք է բոլոր նյութական առումներով համապատասխանեն RFP պահանջներին: Առաջարկը կարող է համարվել «չհամապատասխանող», եթե պահանջվող տեղեկություններից որևէ մեկը չի տրամադրվում, ներկայացված գինը կարող է լինել չափից ավելի կամ ոչ համարժեք, որը չափվում է RFP-ում նշված չափանիշներով, կամ առաջարկն ակնհայտորեն չի համապատասխանում Նախագծում նկարագրված շրջանակներին: Որոշումը համապատասխանության վերաբերյալ պետք է գրավոր արձանագրվի և հաստատվի Գնահատման հանձնաժողովի կողմից:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 4. Աջակցություն մրցույթի հետագա փուլերում մատակարարների ընտրության հարցում (շարունակություն)

3. **Առաջարկների գնահատում** – Գնահատման հանձնաժողովի անդամները պետք է ԱՆՀԱՏԱԿԱՆ գնահատեն առաջարկները: Առաջարկները պետք է գնահատվեն բացառապես RFP-ում նշված չափանիշների հիման վրա: Յուրաքանչյուր չափանիշի գնահատականը պետք է ունենա հստակ հիմնավորում: Անհատական գնահատականների արդյունքում Խորհրդատուն կկազմի գնահատականների ամփոփ մատրից՝ յուրաքանչյուր հայտատուի համար: Հարկ է նշել, որ գնահատման տեսանկյունից Խորհրդատուն տեխնիկական չափանիշների համապատասխանության գնահատում չի իրականացնելու, միայն գնահատվելու են ներկայացված համակարգերի ճարտարապետության համապատասխանությունը RFP պահանջներին: Հետևաբար, նախատեսվում է Գնահատման հանձնաժողովը կներառի տեխնիկական մասնագետներ: ՏՏ ճարտարապետության տեսանկյունից կիրականցվի հետևյալ գնահատումը.
   - Մասնակիցների առաջարկների համապատասխանության ստուգում տեխնիկական բնութագրերի պահանջներին
   - Տրված տեխնիկական լուծումների և իրականացման մոտեցումների ամբողջականության և ճշգրտության գնահատում
3. **Առաջարկների քննարկում** – Գնահատման արդյունքները և գնահատման մատրիցը կքննարկվեն Գնահատման հանձնաժողովի նիստում՝ «միասնական եզրակացության» հաստատման նպատակով: Անհատական միավորները կարող են ճշգրտվել քննարկման հիման վրա: Խորհրդատուն կարող է միավորել վերջնական միավորների առաջադրանքները հետևյալ մեթոդներով. (1) կոնսենսուսային միավոր, (2)հանձնաժողովի առանձին անդամների կողմից տրված բոլոր միավորների ընդհանուր թիվը, կամ (3) հայտատուի միջին միավորներ: Ընտրության մեթոդը կհամաձայնեցվի Գնահատման հանձնաժողովի ներսում՝ գնահատման գործընթացի մեկնարկին զուգահեռ:
4. **Քննարկում/բանակցություն** - Այս քայլը կարող է իրականացվել ըստ անհրաժեշտության: Եթե Գնահատման հանձնաժողովը վստահ չէ որոշ կետերի կամ հայտերում ներառված հարցերի վերաբերյալ, այն կարող է հայտատուից լրացուցիչ պարզաբանումներ պահանջել: Պարզաբանումները և քննարկումները պետք է անցկացվեն Գնահատման հանձնաժողովի կողմից:
5. **Հանձնարարական**. Գնահատման փուլերից հետո Գնահատման հանձնաժողովը գրավոր առաջարկություն է տալիս պայմանագրի շնորհման մասին: Այս գրավոր հանձնարարականը պետք է պարունակի միավորներ և որոշման հիմնավորումը, ինչպես նաև ցանկացած այլ փոփոխական, որը կարող էր դիտարկվել: Հանձնարարականի հաստատումն իրականացվելու է Պատվիրատուի կողմից:
6. **Տեղեկացում և պայմանագրի կնքում –** Հանձնարարականի հաստատմանը կհետևի պայմանագրի կնքման ծանուցումը ընտրված հայտատուին ուղարկելը: Այս փուլը իրականացվում է Պատվիրատուի կողմից՝ առանց Խորհրդատուի ներգրավման:

KPMG

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 5. Նախագծի կառավարման ծառայությունները

### Տեխնիկական առաջադրանքի պահանջ

- **Նպատակ:** Ապահովել Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) հաջող ներդրումը՝ տրամադրելով Նախագծի կառավարման ծառայություններ մինչև ծրագրի վերջնական ներդրումը:
- **Շարունակական առաջադրանք, գործողություններ և վերջնարդյունքներ:** Խորհրդատուն/կազմակերպությունը ակտիվորեն կմասնակցի ԿՖԿՏՀ ծրագրի իրականացմանը՝ կատարելով հետևյալ ընթացիկ պարտականությունները: Այս առաջադրանքը կիրականացվի Նախագծի պլանի հիման վրա՝ հիմնավորված ստորև նկարագրված կոնկրետ արդյունքներով և աջակցությամբ.
- **Գործողություններ:**
  - Նախագծի կառավարման պլանի և մեթոդաբանության մշակում՝ հետևելով լավագույն միջազգային փորձին (օր. PMI/PMBOK, IPMA, և այլն.). Նախագծի կառավարման պլանը պետք է համապատասխանի Տեխնիկական բնութագրերին: Նախագծի պլանավորումը պետք է ներառի միջանկյալ և հիմնական փուլեր ուղեկցվող մշտադիտարկման թափանցիկ և փաստաթղթավորված գործընթացով:
  - Պլանավորել, ներկայանալ և ակտիվորեն մասնակցել Նախագծի կառավարման հետ կապված բոլոր հանդիպումներին:
  - Պատրաստել և գլխավորել Ղեկավար կոմիտեի ամենամսյա հանդիպումները բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
  - Բացահայտել Նախագծի հնարավոր ռիսկերը, պատրաստել ռիսկերի կառավարման ամսական հաշվետվություն, կառավարել ռիսկերի քարտեզը և նախագծի ռիսկի կարգավիճակը:
  - Նախագծի պլանավորումից հետո պլանավորել և մասնակցել մատակարարի հետ կանոնավոր աշխատանքային հանդիպումներին կամ նիստերին (շաբաթական/ ամսական). :
  - Դիտարկել և համաձայնեցնել առաքման պլանավորումը՝ երաշխավորելով, որ մատակարարի գործունեությունը իրականցվում է պլանին համապատասխան և համապատասխանում է Նախագծի պահանջներին:
  - Խորհրդատվություն մատուցել պատվիրատուին լավագույն փորձի և նորարարական լուծումների վերաբերյալ՝ Նախագծի կառավարման և իրականացման գործընթացներ բարելավելու նպատակով:
  - Վերահսկել և աջակցել պատվիրատուին համոզվելու համար, որ մատակարարների կողմից ներկայացված լուծումը համահունչ է նախապես սահմանված պահանջներին և ստանդարտներին:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 5. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

### Տեխնիկական առաջադրանքի  պահանջ

- Վերահսկել ներկայացված լուծումների որակը. ապահովել Որակի կառավարման բոլոր գործընթացների և կառավարման մարմինների առկայությունը: Խորհրդատուն պետք է ստուգի և՛ մատակարարների, և՛ պատվիրատուի կողմից իրականացվող գործընթացները պատշաճ վերահսկության առկայությունը՝ յուրաքանչյուր փուլում ընդունված որոշումները ստուգելու և վավերացնելու համար ապահովելով հավաստի վերահսկողություն և հաշվետվողականություն:
- Մշակել ընդունման համապարփակ գործընթաց և փաստաթղթեր ԿՖԿՏՀ ծրագրի իրականացման յուրաքանչյուր ենթափուլի համար,  ինչպես նաև ԿՖԿՏՀ նախագծի ավարտուն լուծման համար՝ հիմնվելով լավագույն փորձի վրա:
- Վերահսկել վերապատրաստման գործընթացը՝ հիմնվելով առաջարկվող ուսումնական նյութերի վրա:

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 5. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

**Իրագործում**

***Ա) Կազմել Նախագծի կառավարման պլան և մեթոդաբանություն***

- Կիրառելով միջազգային լավագույն փորձը և նմանատիպ ծրագրերում կիրառելի մեթոդաբանությունները՝ մշակել Նախագծին բնորոշ և Տեխնիկական բնութագրին համապատասխան Նախագծի կառավարման պլան, որը կպարունակի հետևյալը.
  - Նախագծի ժամանակացույցը,
  - Նախագծի վերջնարդյունքների շրջանակը,
  - Նախագծի մասնակիցների դերերը և պարտականությունները՝ կիրառելով RACI մեթոդաբանությունը,
  - Որակի վերահսկման կիրառելի մոտեցումները,
  - Շահառուների հետ հաղորդակցման հաճախականությունը և շրջանակը,
  - Մատակարարի հետ համագործակցության պարբերականությունը և շրջանակը,
  - Հաշվետվողականության վերաբերյալ մանրամասներ՝ ներառյալ հաշվետվությունների և զեկույցների ներկայացման պարբերականությունը և բովանդակությունը:
- Քննարկել պլանը Նախագծի Ղեկավար կոմիտեի հետ:

***Բ) Ստանձնել Նախագծի կառավարումը և ապահովել հաղորդակցությունը մասնակիցների և շահառուների միջև***

- Պլանավորել, կազմակերպել և գլխավորել Նախագծի կառավարման հետ կապված հանդիպումներ, մասնավորապես՝ Ղեկավար կոմիտեի ամենամսյա հանդիպումները՝ ապահովելով մասնակիցների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը, հաղորդակցությունը, նպատակների սահմանումը և նպատակների կատարման հաշվետվողականությունը:
- Ստանձնել Ղեկավար կոմիտեի քարտուղարի և Ադմինիստրատիվ ղեկավարի դերը՝ միևնույն ժամանակ կոմիտեի կողմից որոշումների կայացման իրավունքը վերապահելով Պատվիրատուի՝ կոմիտեում անդամակցող ներկայացուցիչներին:
- Անընդհատ կերպով մշտադիտարկել Նախագծի իրականացման ընթացքը և արտահերթ հանդիպումների, քննարկումների կամ հաղորդակցության անհրաժեշտության առաջացման դեպքում անհապաղ ձեռնարկել համապատասխան գործողությունները:

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերության՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 5. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

***Գ) Վերլուծել Նախագծին հատուկ ռիսկերը և շարունակական քայլեր ձեռնարկել բացահայտված ռիսկերի կառավարման համար***

- Օգտվելով նմանատիպ ծրագրերի իրականացման մեր փորձից, Նախագծի շրջանակներում հասանելի տեղեկատվությունից և շահառուների հետ հաղորդակցությունից՝ բացահայտել Նախագծի հնարավոր ռիսկերը և ամփոփել դրանք:
- Անդրադարձ կատարել բացահայտված ռիսկերից յուրաքանչյուրին՝ մշակելով ռիսկերի կառավարման և դրանց ազդեցության զսպման մոտեցումներ:
- Պատրաստել ռիսկերի քարտեզ, որտեղ նկարագրված կլինեն տվյալ պահի դրությամբ առկա ռիսկերը, դրանց նյութականանալու հավանականությունը և զսպման մոտեցումները: Պարբերաբար թարմացնել և վերանայել ռիսկերի քարտեզը՝ հաշվի առնելով նախագծի ընթացքը և Ղեկավար կոմիտեի ամենամսյա հանդիպումների ժամանակ ներկայացնել ռիսկերի քարտեզի ընթացիկ կարգավիճակը:

***Դ) Ապահովել հաղորդակցություն մատակարարի հետ և համակարգել վերջինիս կողմից կատարվող աշխատանքները***

- Սահմանել Մատակարարի հետ պարբերական աշխատանքային հանդիպումների ժամանակացույց, որը կհամապատասխանի Նախագծի ակնկալվող վերջնարդյունքներին և դրանց առաքման ժամանակացույցին, և թույլ կտա սահմանել Մատակարարի գործունեության նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն:
- Հստակ հաղորդակցության միջոցով ապահովել Մատակարարի կողմից իր առջև դրված խնդիրների և դրանց լուծման վերջնաժամկետների ընկալումը: Կազմակերպել խնդիրների լուծման և վերջնաժամկետների պահպանման վերահսկողությունը և հաշվետվողականությունը:
- Կատարել կապող օղակի դեր Մատակարարի և Պատվիրատուի միջև՝ ապահովելով հաղորդակցություն և Մատակարարի կողմից Պատվիրատուի ակնկալիքների և սպասումների հստակ պատկերացում:
- Վերահսկել Մատակարարի կողմից կատարվող աշխատանքների որակը SS ճարտարապետության և գործընթացների կազմակերպման տեսանկյունից: Կիրառել միջազգային լավագույն փորձը և Խորհրդատուի մասնագիտական հմտությունները՝ ապահովելու Մատակարարի գործունեության ողջ ընթացքում կատարված աշխատանքների սահուն ընթացքը և Մատակարարի կողմից որակի վերահսկողության ընթացակարգերի կիրառումը:

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

## Առաջադրանք 5. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

***Ե) Տրամադրել ընթացիկ աջակցություն և խորհրդատվություն Պատվիրատուին***

- Նախագծի ողջ ընթացքում աջակցել Պատվիրատուին՝ առաջարկելով Նախագծի կառավարման առաջադեմ մոտեցումներ, որոնք լայնորեն կիրառելի են միջազգային փորձում, ինչպես նաև Խորհրդատուի կողմից նախկինում իրականացված համանման ծրագրերի ժամանակ օգտագործված մեխանիզմներ:
- Շարունակաբար վերահսկել Մատակարարի կողմից կատարվող աշխատանքները, ներկայացնել վերջնարդյունքները Պատվիրատուին: Աջակցել Պատվիրատուին հավաստիանալ, որ Մատակարարի կողմից առաքված վերջնարդյունքները համապատասխանում են տեխնիկական առաջադրանքով սահմանված բնութագրերին և Պատվիրատուի սպասումներին:
- Մշակել ընթացակարգ, համաձայն որի պետք է ընդունվեն Նախագծի վերջնարդյունքները: Ընթացակարգի նպատակն է աջակցել Պատվիրատուին վերջնարդյունքների գնահատման և ընդունման մասին որոշման կայացման հարցում, ինչպես Նախագծի առանձին վերջնարդյունքների կամ դրանց ենթափուլերի, այնպես էլ նախագծի վերջում տրամադրվող ավարտուն լուծման՝ ԿՖԿՏՀ համակարգի վերաբերյալ:
- Համակարգել Պատվիրատուի և Նախագծի շահառուների վերապատրաստման գործընթացը՝ ապահովելով Մատակարարի կողմից համապատասխան ուսումնական նյութերի պատրաստումը և նոր ներդրված համակարգերի/մոդուլների կիրառման վերաբերյալ շահառուների մասնագիտական կարողությունների զարգացումը:

***Զ) Իրականացնել ԿՖԿՏՀ համակարգի տեխնիկական տեսանկյունից վերջնարդյունքների վերլուծություն***

ԿՖԿՏՀ համակարգի մոդուլների ստացման ընթացքում կկատարվեն հետևյալ աշխատանքները.

- Պատվիրատուին փոխանցված մոդուլների փորձարկումների անցկացում տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանության տեսանկյունից
- Յուրաքանչյուր մոդուլի բոլոր հիմնական գործառույթների ճիշտ աշխատանքի վերլուծություն
- Մոդուլների ճիշտ փոխազդեցության վերլուծություն միմյանց և արտաքին համակարգերի հետ
- Ինտեգրման լուծումների կայունության և կատարողականի գնահատում
- Յուրաքանչյուր մոդուլի օգտագործողի ինտերֆեյսի հարմարավետության և ինտուիտիվության գնահատում
- Հայտնաբերված թերություններով և բարելավման առաջարկություններով հաշվետվությունների կազմում
- Ֆունկցիոնալության օպտիմալացման և բարելավման վերաբերյալ առաջարկությունների ձևավորում

© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Առաջադրանք 5. Նախագծի կառավարման ծառայությունները (շարունակություն)

### *Զ) Ապահովել պատշաճ հաշվետվողականություն և Նախագծի ընթացքի մասին ներկայացնել պարբերական հաշվետվություններ/զեկույցներ*

- Նախագծի ողջ ընթացքում վերահսկել պատվիրատուի կողմից կատարվող աշխատանքները, նախագծի ընթացքը, առաջացող մարտահրավերները, ինչպես նաև բացահայտված ռիսկերը և պատրաստել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:
- Հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին՝ համոզվելու համար, որ նախագիծն ընթանում է Պատվիրատուի սպասումներին համահունչ:

Նախագծի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և հաշվետվողականության ապահովման նպատակով կպատրաստվեն հետևյալ հաշվետվությունները և կտրամադրվեն Պատվիրատուին.

| Հաշվետվությունը | Ժամկետը | Նկարագրությունը |
|---|---|---|
| Մեկնարկային հաշվետվություն | Պայմանագրի կնքումից հետո՝ 4 շաբաթվա ընթացքում | Ամփոփ հաշվետվություն, որը կպարունակի տեղեկատվություն Նախագծի ողջ ընթացքում նախատեսվող գործողությունների և դրանց մասնակիցների վերաբերյալ: Կներկայացվեն ակնկալվող վերջնարդյունքները և դրանց տրամադրման ժամանակացույցը: Պատվիրատուի հաստատմանը կներկայացվեն ամսական և եռամսյակային հաշվետվությունների առաջարկվող ձևաչափերը: |
| Ամսական հաշվետվություն | Յուրաքանչյուր հաջորդ ամսվա 10-րդ օրը | Պարունակում է ամսվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփումը՝ ներառյալ իրականացված նպատակները, առաջացած մարտահրավերները և սահմանված վերջնարդյունքների/գործողությունների կարգավիճակը: |
| Եռամսյակային հաշվետվություն | Եռամսյակին հաջորդող ամսվա 10-րդ օրը | Պարունակում է եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների ամփոփումը՝ նույն սկզբունքով, ինչ ամսական հաշվետվությունները: |
| Տարեկան հաշվետվություն | Նախագծի մեկնարկից հետո ամեն 12 ամսին հաջորդող ամսվա 15-րդ օրը | Պարունակում է տարեկան կտրվածքով կատարված աշխատանքների ամփոփումը: Ներառում է Նախագծի նպատակների կարգավիճակը, կատարված վերջնարդյունքները, տարվա ընթացքում բացահայտված մարտահրավերները և առաջիկա տարվա ընթացքում նախատեսվող գործողությունները: |
| Նախագծի միջանկյալ հաշվետվություն | Նախագծի մեկնարկից 2 տարի անց՝ հաջորդող ամսվա 15-րդ օրը | Այս հաշվետվությունը պարունակում է Նախագծի միջնակետի դրությամբ կատարված աշխատանքները, իրականացված նպատակները, Խորհրդատուի կողմից ներկայացված վերջնարդյունքները, բացահայտված և հաղթահարված մարտահրավերները և ամփոփում է Նախագծի կարգավիճակը տվյալ պահի դրությամբ: |
| Նախագծի ավարտական հաշվետվություն | Նախագծի ավարտից հետո՝ 30 օրյա ժամկետում | Այս հաշվետվությունը ամփոփում է Նախագծի ողջ ընթացքը և ավարտը, պարունակում է սահմանված նպատակների իրագործման ընթացքի ամփոփ նկարագիրը՝ ներառյալ առաջացած մարտահրավերները և գրանցված հաջողությունները: |

KPMG
© 2024 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ: Բոլոր իրավունքները պահպանված են:

